




Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

11,669

Հիշատակի Իր Կերպարաններ

9(47.925)

2-15

1926



SEP 2011
31 AUG 2007

1 № „ԳԱՂԱՓԱՐԿԻ ԳՐԱԴԱՐԱՆ № 1

ԲԺ. Ա. ՂԱԶԱՐԵԱՆ

Ս. ՎՐԱՑԵԱՆԸ

ԵՒ

ԱՆՑԵԱԼԻ ԻՐՈՂՈՒԹԻՒՆՆԵՐԸ



1926

ՏՊԱՐԱՆ „ՌՈՂՁԱՆԱՑԻ“ ԹԷԿՐԱՆ.

9(47.923)

2-15

ԲԺ. Ա. ՂԱԶԱՐԵԱՆ

Ս. ՎՐԱՑԵԱՆԸ

Ե Ի

ԱՆՑԵՍԼԻ ԻՐՈՂՈՒԹԻՒՆՆԵՐԸ

1925

Տպարան «ՌՈՇԱՆԱՅԻ» ԹԷԿՐԱՆ



814-89

11.668

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԴԱՐԱՆ

ԳՐԱԴԱՐԱՆԻ ԿԱՐԴԱՆԱԿ

48

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԴԱՐԱՆԻ ԿԱՐԴԱՆԱԿ

1925

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԴԱՐԱՆԻ ԿԱՐԴԱՆԱԿ

Ե Ր Կ Ո Ի Խ Օ Ս Վ

Սոյն գրքովի հրատարակութեան ղրդապատճառը մի քանի հանգամանքներ են. նախ այն, որ նիւթը վերաբերում է հայ ժողովրդի անկախութեան չափազանց հետաքրքիր շրջանին, երբ Հայաստանը ենթակա թիւրքիայի հարձակումներին, մրցման առարկա էր Անգլիայի և Սովետների միջև:

Երկրորդ՝ այդ տագնապալից շրջանում երկրի հարազատ տարրերը փոխանակ աշխատելու հայրենիքը ծանր դրութիւնից հանելու՝ ղրազւած էին սկզբունքային հարցերի քննութեամբ:

Երրորդ՝ Հ. Յ. Դաշնակցութիւնը, որ Հայաստանի իշխանութեան ղեկին իր ձեռքն ունէր, քաղաքական հաստատութիւն չունեցաւ հայ ժողովրդի բաղդը ժամանակին կապելու ուստի ժողովրդի հետ և այդ ձևով փրկելու հայութիւնն ու հայ երկիրը. այլ խաղալիք Դաշնակիցների ձեռքին, հայ ժողովրդի իրական ունեցածը զոհաբերեց ապագայի ցնորքներին:

Եւ չորրորդ՝ Ս. Վրացեանը լինելով այդ շրջանի անցուղարձի կենտրոնական անձը, «անցեալի իրողութիւնները» ներկայացնում է այն ձևով, որ չէ համապատասխանում իրականութեան:

Բժ. Ա. Ղ.

20-ին Նոյեմբերի 1925 թ.

Թէհրան:

Ս. ՎՐԱՑԵԱՆՆԵՒ ԱՆՑԵԱՀԻ
ԻՐ ՈՂՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Ա.

Ս. Վրացեանը «Դրօշակի» օգոստոսի համարում, «մեղադրանքներ և իրողութիւններ» վերատառութեամբ, մի յօդած է տպել, թէ լեւոն է եղել և թիւ պիտի լինի Դաշնակցութեան դերը հանդէպ Պրիւրապին իշխանութեան:

Նման խնդիրներ զուցէ և չյարուցէին, եթէ կեանքն ու իրողութիւններն իրար համապատասխանէին, և մանաւանդ, մարդիկ անկեղծ լինէին և ասէին այն. ինչ որ իրօք իրողութիւն էր:

Այն տաքնապալից և շփոթ տարիները, որ ապրեց հայ ժողովուրդը մեծ յեղափոխութիւնից յետոյ և մանաւանդ, իր անկախութեան շրջանում, այնքան հակասական ու իրար իսաշաճեող էր, որ շատ քշերին զուցէ յաջողի իրողութիւնները տալ այնպէս, ինչպէս նրանք տեղի ունէին կեանքի մէջ:

Նոյնը կարելի է ասել նաեւ, աւելի կամ պակաս չափով, Կովկասեան միւս ժողովուրդների մասին:

Ս. Վրացեանը այդ շրջանի իրողութիւններն է աշխատում պարզել, միաժամանակ յետ մղել այն մեղադրանքները, որ մեծամասնականներն ուղղում են Դաշնակցութեան:

եւ մի շարք փաստեր է մատնանշում, որով ուզում է ապացուցել, որ Դաշնակց լիւրժիւնը ժամանակին ցանկացել է լեզու գտնել Սորհրդային իշխանութեան հետ, սակայն փերջինս է, որ շարունակ յետ է մղել:

Եւ որովհետեւ անցնալը պատմութեան սեպականութիւն է դարձել, որի մասին խօսում է Ս. Վրացեանն իր յօդածում, որպէս զի կրկնակի սխալներէր խուսափած լինենք, յետագա սերունդներն էլ չմոլորեն ու ճիշտ եզրակացութիւն հանեն անցեալի փաստերից, մենք էլ ասենք այն, որ իրօք տեղի է ունեցել և համապատասխանում է ճշմարտութեան:

Որպէսզի հասկանալի դառնան Ս. Վրացեանի փաստերն ու մէջբերումները, մենք շատ թուցիկ կերպով աշխատենք ուրազծել այն կախարդական շրջանը, որի մէջ իր առաջին տարիներին, ապրում էր Հանրապետական Հայաստանը, որի պետական ազդեցիկ գործիչներէր մէկն էր ինքը՝ Ս. Վրացեանը: Ասել է, առանց Ս. Վրացեանի մասնակցութեան, քաղաքական որեւէ դէպք տեղի չի ունեցել, որին անձամբ կամ խորհուրդներով մասնակցած չլինի ինքը:

18 թւի վերջերից, Համաձայնութիւնը վերջնականապէս պարտէց և Դաշնակիցները դարձան հրապարակի տէրը, Կովկասն էլ ընկաւ վերջիններիս ազդեցութեան տակ: Գերմանիայի և Թիւրքիոյ ներկայացուցիչներն անմիջապէս թողին Կովկասը և նրանց փոխարէն եկան Անգլիայի, Ֆրանսիայի և Իտալիայի պաշտօնական ներկայացուցիչները: Զինուորական և քաղաքական խնդիրները, կարելի է ասել, բացառապէս ծանրացած էր Անգլիայի, մասամբ էլ Ֆրանսիայի և Իտալիայի, ներկայացուցիչի վրա: Իտալիայի ներկայացուցիչը անտեսական խնդիրներով էր զբաղւած. Կովկասը իտալական ապրանքների շուկա էր ուզում դարձնել, որոնց փոխարէն Իտալիա էր ուղարկում Կովկասի հում նիւթերը՝ բուրդ, բամբակ, կաշեզէն, մարգանց և այլն:

Այդ շրջանում Սորհուրդները դեռ ևս չըջապատւած էին Դենիկիւնի, Կալչակի, Վրանդելի և Իւդենիշի մէկը միւսին յաջորդող, սպիտակ զօրամասերով, որոնց մեծապէս օգնում էին Դաշնակից պետութիւնները:

Սորհուրդներն, այն ժամանակ, այն քաղաքական մեծ ոյժը չէին ներկայացնում, ինչ որ դարձան յետագայում. աւելին դեռ, ընդհանուր կարծիք էր և դրա տարածմանը մեծապէս նպաստում էին Դաշնակիցները, որ այսօր վաղը տապալուելու են բոլշեւիկները և նրանց փոխարինելու են սպիտակները:

Ահա այդպիսի մի շրջանում, ինչպէս ասացինք, Կովկասի տէր ու տնօրէնը հանդիսանում էին Դաշնակիցները և փաստօրէն նրանք էլ զեկավարում էին կովկասեան ժողովուրդներին:

Դաշնակիցները, ինչպէս իրենց սովորութիւնն է, կովկասեան ժողովրդներին մի կողմից սիրաշահում էին, իսկ միւս կողմից՝ իրար դէմ սրում, իրար թուլացնում:

Օրինակի համար վերցնենք Դաշնակիցները քաղաքականութիւնը Հայաստանի նկատմամբ:

Առաջին անգամից նրանք սիրալիր վերաբերմունք ցուցաւին դէպի իրենց «փոքր գաշնակիցը»՝ հայերը. անմիջապէս մի բանի սպայ և մօտ հարիւր քսան սեւամորթ զինուորներ ուղարկեցին Հայաստան և շատ արագ մարքերին տաճիկիւրից գրաւած Սուրմալուի, Ղարաի և Արդահանի շրջանները՝ մինչև 14 թւի Ռուսական սահմանները և յանձնեցին հայերին: Բացեցին կարճ ժամանակով նաև Երևան—Զուլֆա երկաթուղւղիժը, յարաբերութիւն ստեղծելով Հայաստանի և Պարսկաստանի միջև:

Նման մի ակտ, ընտանեօրէն, պիտի խանդավառութիւն
ու հրճւանք սրտաճառէր հայ ժողովրդին, որ 18 թւի տաճկա-
կան ճնշումներն ու աւերումներն էր տեսել և մօտ մի միլիոն
ժողովուրդ սեղմւել էր մի փոքրիկ տարածութեան վրա, դուրի
ամէն բանից, ենթակա սովի ու համաճարակներէ:

Դաշնակիցները դարձան հայ ժողովրդի, ինչպէս և հայ
պետական գործիչները, սրանց թւում նաև Ս. Վրացեանի, փըր-
լիչներն ու սիրելիները:

Նոյն ժամանակներն ահա Հայաստանի և հայ ժողովրդի
վրա յատուկ ուշադրութիւն սկսեցին դարձնել նաև ամերիկա-
ցիները:

Մարդասիրական զգացմունքը մի կողմից, պատերազմի
ընթացքում մեծապէս տուժած հայ ժողովրդի ֆնացորդների ա-
պահովութիւնը միւս՝ ստիպեց Վիլսոնին արժարձել Հայաս-
տանի մանդատի և հայ սովալլուկ ժողովրդի անմիջական օգ-
նութեան խնդիրը:

Երկրորդ խնդիրը Ամերիկեան կառավարութիւնը պատ-
ւով վճռեց, հայ ժողովրդին մօտ 14 միլիոն դոլլարի օգնութիւն
հասցրեց, սրա մէջ հաշւած երեք և կէս միլիոն փութ սպիտակ
ալիւր, որ ուղարկեց Հայաստանին, իսկ առաջին խնդիրը, հայ
երկրի սահմանների որոշման և նրա վրա ստանձնելիք յանձնա-
ռութեան խնդիրը, ոչ միայն դրական հետեանք չտուեց, այլ
ընդհակառակը, յետագայում պատճառ դարձաւ թիւրքիայի
կողմից ուժեղ թշնամանքի:

Դէպի հայն ու Հայաստանը սկսեալ շարժումը մեծ էր.
կոմիսսիաներ ու քննիչներ էին, որ իրար յաջորդում էին և

Հայաստանը տարբեր տեսակէտներից ուսումնասիրում: Հա-
յաստանը դժւել էր աշխարհագրապէս, ուսումնասիրւել էր նրա
տնտեսական հարստութիւնները, միջոցներ էր ձեռնարկում
դուռ բացելու ծովափ և այդպիսով ընդմիշտ Հայաստանը աղա-
տելու Վրաստանից ունենալիք կախումից:

Եւ այդ նպատակի համար քիչ և անբաւարար էին նը-
կատում Ռիդէն ու Պոփէն, այլ ուզում էին Տրապիզոնն ու
Սամսոնը յատկացնել և այդ նպատակի համար: Անգլո-Ամերի-
կեան զինւորական կոմիսիան, Հայ կառավարութեան զինուո-
րական ներկայացուցիչների հետ միասին, գծում է Հայաստա-
նի միջակ ծրագիրը, միաժամանակ ներշնչելով ու հիպնոսե-
լով հայ քաղաքական գործիչներին, թէ հնարաւոր է աւելի
մեծ ծրագիր ու պահանջներ դնելու, որի հետեանքը կգաւ
Ս. Ահարոնեանի պատուիրակութեան ծովից ծով ծրագիրն ու
պահանջը:

Այս սկզբնական շրջանում Վրաստանն ու Ադրբէջանը
առանձին ուշադրութեան չէին արժանանում. և դա երկու
պատճառով. նախ՝ որ նրանց համար այն շարժումը չկար
արտասահման, ինչ որ Հայաստանի համար կար: Բ.՝ Հայաստանի
խնդիրը հին խնդիր էր, յօգուտ օրի աշխատել ևն շատ եւրո-
պացի զբաղէտներ ու քաղաքական գործիչներ, այն ինչ Վը-
րաստանի, առաւել ևս Ադրբէջանի, քաղաքական աղատու-
թեան խնդիրը նոր էր և միայն մեծ յեղափոխութիւնից յետո
արժարձւած:

Մինչ մեծ յեղափոխութիւնը վրաց մենչիկիները Վրաս-
տանը Ռուսաստանի անբաժան մասն էին նկատում և վրաց

ժողովուրդի բախտը երկրի սոցիալիստական յեղաշրջման մէջ էին տեսնում:

Բայց Դաշնակիցների ներկայացուցիչներն ապրելով Թիֆլիսում, Վովկասի այդ կուլտուրական կենտրոնում, ուր ամեն յարմարութիւններ ու գիւրութիւններ կար, քաղաքական խնդիրներին զուգընթաց կարիք էին զգում նաև անհատական կեանքով ապրելու մի բան, որի մէջ շատ հմուտ ու շատ շնորհալի են վրացիները, յատկապէս նրա աղնականութիւնը, որը ցարիզմի ժամանակներից շփման մէջ էր ուսն բարձրագոյն անճնադրութիւնների, ինչպէս և պալատական գործիչների հետ: Վրաց աղնականութիւնը, որ նրա շնորհալի արտաքին արդ ու զարդը, շարժումներն ու հիւրասիրութիւնները՝ գրաւման այդ լաւագոյն միջոցները, բնականաբար, զբոսնեցով էլ գրաւում էին երկրի նոր տէրերին:

Իսկ միւս կողմից՝ Դաշնակիցները կրկնակի այցելը Բագրի նաւթառատ շրջանները, անտեսական այդ մեծ հարբատութիւն պարունակող վայրերը, հետզհետէ իրենց վրա էին կենտրոնացնում Դաշնակիցների ուշադրութիւնը:

Հայաստանն այդ շրջանում, որ նա կայացնում էր աւերակների մի կոյտ, իր աղքատիկ բնութեամբ, մերկ ու քարոտ բարձրավանդակով, սովի ու համաճարակների մէջ լեկուաւոր գաղթականներով ու որբերով, չնչին ու փոքրիկ տնտեսականութիւն, կիսաւեր քաղաքներով, բնական էր հետզհետէ պիտի վերադարձնէր իշխողների աչքից:

Եւ այդպէս էլ լինում է. Հայաստանի վաղաժամ յան-

կողմը, որքան այդ թելադրում էր արտասահմանից և որքան դա վերաբերում էր Թիւրքիայի հողամասերին՝ պաշտպանում էր. իսկ ինչ վերաբերում էր Հայ-Վիրական, Հայ-Աղբրէջանեան սահմանափակներին՝ ոչ միայն աչքաթող էր անում, այլև շատ անգամ պաշտպանում էր հակառակորդների շահերն ի վնաս Հայաստանի:

Հայաստանը լինելով միակ երկիրը, որի վրա ոչ միայն Թիւրքիոյ աչքն էր, այլև Վրաստանի և Աղբրէջանի, միշտ էլ ենթակայ է եղած ծաւառման ու յամրակման: Երբ դաշնակիցները եկան և սիրալիր վերաբերմունք ցոյց տւին դէպի հայերը՝ վերջիններս էլ քաղաքական փոխ-յարաբերութիւնների մէջ տհաս ու քաղաքագիտութիւնից զուրկ, անկեղծօրէն բացեցին իրենց սիրտը Դաշնակիցների առաջ և սկսեցին իրենց գանգատների ու պահանջների անվերջ շարանը: Մի բան, որ շատ վատ ազդեց նոր տէրերի վրա, որոնց համար ոչ թէ արդարութիւնն ու վերջի վերջոյ հայ ժողովրդի շահերը նշանակութիւն ունէին, որքան իրենց: —

Կովկասի վերաբերեալ քաղաքա-անտեսական բոլոր խնդիրները վճռում ու ընթացք էին ստանում Թիֆլիսում, բնականաբար, յոգևոր հայի չափով լինէր, որովհետև այդ խնդիրների անմիջական վճիռներին հայը չէր մասնակցում, իսկ վրացին ու աղբրէջանցին վերահասու էին թէկուզ ոչ անմիջօրէն:

Եւ ահա այստեղից սկսում է ողբերգութիւնը. վրացիներն ու աղբրէջանցիներն երես առած Դաշնակիցների ներկայա-

ցուցիչները թեւարկութիւնից, սկսում էին առաջ քաշել իրենց սահմանային պահանջները: Վրաստանը սկսում է իր ճնշումները. նա իր ղօրքերը Ախալքալաքի և Լոռւա ուղղութիւններ է առաջացնում՝ հայկական շրջանակները վրաստանին կցելու գիտումով, իսկ Ալքերէջանը Նախիջևանի շրջանն ու Լեւոնային Ղարաբաղն է առաջ քաշում, Զանգեզուրը կառկածի տակ թողնելով:

Դաշնակիցների ներկայացուցիչները մտի աւանքով են նայում այդ խնդիրներին, եթէ չաանք նրանց կամքը դեր է խաղում. և սկսում է այն, որը չարիտի լինէր. տեղի է ունենում Հայ-վերական ընդհարումները մի կողմից, իսկ Ղարաբաղի կոտորածներն ու աւերումները՝ միւս:

Մինչդեռ վրացին ու թաթարը, շրջման միջոցով լուրացել էին հերոսացի իշխողների հոգեբանութիւնը և նրանց ասածներին քիչ էին ուշադրութիւն դարձնում, հայը հլու կամակաւ էր և դաշնակից աննշան սպայի մատի բարձրացումով անմիջապէս դադարեցնում էր կռիւը և յաղթողի դերից պարտողի դերում մնում:

Սակայն Դաշնակիցները հայերի ուշադրութիւնը գրաւում էին թիւրքահայ դատի վրա. նրանք գործնական քայլերի էին դիմում լուծելու թիւրքահայ վիլայէթների խնդիրը և կցելու այն Ռուսահայաստանին: Կովկասեան խնդիրները նրանք աշխատում էին յետաձգել:

Եւ ահա օրին մէկը, վերջնական ձեւաւորում է ստանում հայ դատը, կազմւում է Սերի դաշնադիրը, որի տակ պաշտօնապէս ստորագրւում են դաշնակից պետութիւնների,

թիւրքիոյ և Հայաստանի ներկայացուցիչները: Հայի դարաւոր իղձերն իրականացած են համաւրում և հայը զանգաւածօրէն, իր կառավարութեան հետ, հրախտապարտ էր զգում Դաշնակիցներին:

Հոգեբանական այսպիսի պայմաններում, այլ և այն ժամանակ, երբ Հայաստանի կառավարութիւնն իր պաշտօնական ներկայացուցչութիւնն ունէր Կոլչակի և Դենիկինի մօտ, ինչպէս և վերջինս կարճ ժամանակ իր ներկայացուցիչն էր պահում Հայաստանում, Հայաստանի կառավարութեան ու նրա ղեկավար Վուսաղցութեան մերձացման փորձերը բոլշեիկների հետ ինչ արժէք կարող էին ունենալ: Ոչինչ:

Ս. Վրացեանի թեւած փաստերը ահա այս շրջանին են վերաբերում. այսինքն՝ մի այնպիսի մոմենտի, որ անկարելի էր երեւակայել, թէ հայ կառավարութիւնը կարող կլինէր խզել իր կապերը Դաշնակից իմպերիալիստներից. մի խղում, որը հաւասարազօր կլինէր Սերի դաշնադրից հրաժարւելուն:

Բնական էր, որ այդպիսի հրաշք տեղի չէր կարող ունենալ. մանաւանդ Դաշնակիցների ներկայացուցիչները խստիւ հսկում էին բոլշեիկեան շարժմանը և ամեն մի համակրանքի քայլ, որ նկատուում էր դէպի բոլշեիկները, խստիւ հետապնդւում էր:

Ս. Վրացեանն անշուշտ չի մոռացել այն խիստ բողոքը, որ Թիֆլիսի Անգլիայի ներկայացուցիչը ուղարկել էր Հայաստանի կառավարութեան, ներկայացնելով բաղձաթիւ մէջբերումներ Վրաստանի Հ. Յ. Դաշնակցութեան օրդան «Աշխատաւորից», սպառնալով, որ եթէ Դաշնակցութիւնը կշարունակէ

նման յօդաձևեր տպել, այն ժամանակ իրենք հրաժարուում են, ինչպէս թիւրքահայ դատի, նմանապէս և Ռուսահայաստանի պաշտպանութիւնից:

Այդ նկատողութեան հետեանքը յայտնի է Ս. Վրացեանին և իր ընկերներին:

Այս պատճառով Բիւրօն խիստ նկատողութեան արժանացրեց Վրաստանի Կենտկոմին իր տհաս քաղաքականութեան համար, և հրահանգեց ընդմիշտ դադարացնել նման համակրանքները մեծամասնականների հասցէին:

Եթէ Ս. Վրացեանը անկեղծ լինէր, նա կը հրաժարէր նման մէջբերումներից և իր տւած փաստերը չէր ծառայացնիլ որպէս հակամեղադրանքներ Ձիչերինի ասածներին:

Մի կէտում մենք ևս համաձայն չենք Ձիչերինին, այդ այն է, որ նա աւելի հաւատով է վերարբերում մուսաւաթիստ խան խոյսկուն և մենշևիկ Գեգեչկորուն, քան թէ Դաշնակցութեան:

«Անդրկովկասեան կառավարութիւններից դաշնակցական կառավարութիւնը ամենից ծայրայեղ գիւրք է բռնել՝ անհաշտ կռիւ մղելով աշխատւորութեան դէմ»:

Սա ճիշտ չէ:

Մինչդեռ խան-խոյսկին և Գեգեչկորին ապահովել էին նախապէս իրենց կոնսկը թիւրքիոյ հաւածներէից և հրեաները շրջել էին «առ երևոյթ» դէպի խորհուրդները, մտածելով գուցէ այդ ձևով հնարաւոր լինի բոլշևիկեան վտանգի գէպքում դուրս պահել, այն ինչ Դաշնակցութիւնը հրեան տւած տաճիկներին, ժամանակ չունէր թիկունքի մասին յոգալու:

Ինչպէս և փաստ է, որ այդ նոյն խան-խոյսկուն և Գեգեչկորուն «առ երևոյթ» բանակցութիւնների ժամանակ Վրաստանի և Ալբանիայի բանտերը լիքն էին բոլշևիկներով, նրանց չէ՛լ սէրը մասնայական գնդակահարութիւններ էին կատարում: Այն ինչ հայ կառավարութիւնը բացել էր իր դռները և ազատ թողել էր տալիս բոլշևիկներին մուտքը Հայաստան:

Այս իրողութիւնը սակայն չէ կարող արդարացում ծառայել Ս. Վրացեանի ասածներին, քանի որ, ինչպէս ցոյց տւինք, հայ բանագնացներ ուղարկելը խորհրդային Ռուսաստան, աւելի շուտ ձևական ու նախադրուշական միջոց էր, քան թէ բղխում էր հայ կառավարութեան և նրա ղեկավար կուսակցութեան հոգուց:

Եւ դա այլ կերպ էլ չէր կարող լինել, քանի որ հայ կառավարութեան համար դեռ ևս գոյութիւն ունէր Սերի Դաշնագիրը և իրենց ուղեղի մէջ էլ մեխւած էր և այսօր էլ շարունակում է մնալ Միացեալ և Անկախ Հայաստանի գաղափարը:

Բ.

Սենք արգէն ներկայացրինք Հայաստանի անկախութեան սկզբնական շրջանի օրեկտիւ պայմանները, որոնք անհնարին էին դարձնում հայ կառավարութեան լիզու զրտնելու բոլշևիկ Ռուսաստանի հետ:

Այժմ ցոյց տանք Ս. Վրացեանի առաջ քաշած բանագնացութիւնների իրական արժէքն ու նշանակութիւնը:

Որպէսզի «անցեալիւ իրողութիւնները» և բանագնացութիւնների անյաջողութիւնները չկապենք անհատ, թէկուզ պատասխանատու ընկերների հետ, մենք վերցնենք այն փաստե-

ըր, որոնք անմիջապէս կտարած են Երևանի կառավարութեան հետ, որոնց մէջ, անշուշտ, մասնակցութիւն է ունեցել և ինքը Ս. Վրացեանը, թէ որպէս կառավարութեան անդամ և թէ որպէս Բիւրօյի:

Այս բանն անհրաժեշտ է, որովհետեւ յաճախ մեզ պատահել է լսել, թէ հայ բանագնացները, նրա այս կամ այն անդամը, կամ հենց ամբողջ պատերազմութիւնը, իր կոչման չէ համապատասխանել, ինչպէս ասում են, օրինակ, Շանթի պատերազմութեան մասին:

Որպէսզի նման առարկութիւններին միանգամ ընդմիշտ վերջ տւած լինին, վերցնենք Լեզրանի բանակցութիւնները Երևանում:

Շանթի պատերազմութեան Մոսկւա ուղարկելուց յետոյ, թէ միաժամանակ, Մոսկւան Հայաստան էր ուղարկել իր լիազօր ներկայացուցիչ Լեզրանին, խորհրդատուների հետ միասին, որոշ առաջարկներով:

Նախ քան այդ առաջարկների քննութեան անցնելը, մենք ներկայացնենք այն պայմանները, որի մէջ ապրում էր Հանրապետական Հայաստանը 1919 թւի երկրորդ կիսից սկսած, հայ հայրենիքի ազատագրութեան երկրորդ շրջանում, որպէս զի ընթերցողը լրիւ պատկերացնէ Լեզրանի բանակցութիւններն իր ամբողջութեան մէջ:

Պիտի ասենք, որ Թիւրքիան թէև անգլիական թիթեկարգագրութեամբ քաշուց Հայաստանից և 14 թւականի հողամասերը թողեց հայերին, սակայն շատ չանցած, իր էմիրներին իր միջոցով սկսեց գործել Հայաստանի ներսը. հայ տերրիտորիայի վերա, թիւրքացնակ վայրերում, գործելու, կենդանիներ, ստեղծեց, միաժամանակ կապ պահպանելով Ադրբեջանի հետ:

Երևանի վերա, թիւրքացնակ վայրերում, գործելու, կենդանիներ, ստեղծեց, միաժամանակ կապ պահպանելով Ադրբեջանի հետ:

Ճիշտ է, թէև տաճիկները 18 թւի արշաւանքից յետոյ Բաքուն գաղութել էին զօրքերից և Ադրբեջանի հանրապետութիւնը նորից վերականգնել էր, սակայն երկար ժամանակ երկրի ղեկավարութիւնը գտնուում էր թիւրք գործիչների ձեռքը, իսկ զօրքերի կազմակերպութիւնն ու վարժութիւնները յանձնւած էր տաճիկ ազաններին:

Տաճիկ ղեկավարներից յայտնի էր Նուրի Բէյը, որը լիայիստում էր պանիսլամիտական ծրագրեր և աշխատում էր Ադրբեջանի թիւրքութիւնը, Նախիջևանի վրայով, օղակել Թիւրքիայի հետ:

Մեզ այս Նուրի Բէյն էր, որ Ադրբեջանի գրաքննիչ ղեկավարում էր Բաքու-Պէշաբադ, Վէրի-Բասաբի, Զանդի-Բաքու, Ծաբուրի, Աղբաբայի ու Զլգրի հոծ թիւրքութիւնը և ապստամբ վիճակում պահում Հայաստանի դէմ: Եւ դա երկու ղեկավարով, նախ՝ որ այդ շրջանների շարունակական ապստամբութիւններով կարողանա Հայաստանի ուղղութիւնը վրիպել Դաւաթաղից և Զանդիդուրից, որոնց տիրապետութիւնը պանիսլամիտական ծրագրի խոշոր յաջողութիւնն էր ապահովում, իսկ միւս կողմից՝ Հայաստանի կողմից ամեն մի եքսցէս թիւրքերի դէմ, ստանալ էր բերում իսլամ օգոսթ Թիւրքիայի կողմից, այլ և զէնք ծառայում վերջինիս ձեռքին՝ ցոյց տալու Դաշնակիցներին, որ հայերը քաղաքականապէս չեն համաձայնում չեն, հետեւապէս չեն կարող անկախ պետութիւն կազմել: Իսկ վերջին պարագան Թիւրքիան օգտագործում էր որպէս

216-89

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱՐԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱՐԱՆ

միջոց՝ թիւրքահայ վիլայէթներէ անջատման առաջն առնելու դէմ:

Անգլիան էլ, որպէսզի կարողանա թիւրք զօրքերը Առկաւ սահմաններէց հեռացնել, որոնք մշտական սպառնալիք էին իր կովկասեան գործունէութեան, յոյներին սրում է թիւրքիայի դէմ:

Պայթում է Յոյն—թիւրքական պատերազմը: Դաշնակիցները սկզբնական շրջանում օգնում են յոյներին և շնորհիւ այդ օգնութեան, յոյները մեծ յաջողութեամբ առաջ են շարժւում և տիրում թիւրքական հողամասերին, գլխաւորապէս Զփուռայի շրջանում և արագ առաջ են շարժւում Անգլիայի ուղղութեամբ:

Այս շրջանում է, որ հրապարակ է գալիս Մուստաֆա Քեամալը, իր շուրջն է խմբում երկրի զիտակից տարրերին և սկսում է կազմակերպել թիւրք լքած զօրաբանակը ու հիմք դնել թիւրք ազգային պետութեան:

Մուստաֆա Քեամալի ձեռնարկութիւններին օգնում է Սովետական Ռուսաստանը, որի շնորհիւ երկու հարեան պետութիւններէլ փոխ-յարաբնութիւնը դնալով լաւանում ու բարեկամական են դառնում:

Ռուս. թիւրքական մերձեցումը, բնականաբար, չէր կարող իր վրա չկենտրոնացնել Դաշնակիցների ուշադրութիւնը:

Իտալիայի համար անհանդուրժելի էր Յունաստանի զօրանալը, որպէս հարեանի, իսկ Անգլիային անհանդուարացնում էր մուսուլման աշխարհի հզօրանալն ու նրա հետ բոլշևիկ Ռուսաստանի դաշնակցութիւնը:

Եւ շահերի բաղխումներն առաջ են բերում ուժերի նոր դասաւորումներ:

Իտալիան, որ ցանկանում էր Յունաստանի թուլութիւնը, հակառակ այն հանգամանքի, որ վերջինս Մեծ պատերազմի ընթացքում գործում էր Դաշնակիցների շղթայում, ըսկսում է զաղտնի օգնել թիւրքիային ռազմաւթերքով և այլ պարագաներով. նման գիծ է բռնում նաև Անգլիան: Եւ որպէսզի թիւրքիան կարողանա Ռուսաստանից անջատել Անգլիան թողնում է իր խոտորնակ քաղաքականութիւնը թիւրքիայի հանդէպ. սկսում է նորանոր զիջումներ ու խոստումներ անել Մուստաֆա Քեամալին ու նրա կողակալութեան:

Դաշնակիցներից միայն Ֆրանսիան է, որ այդ շրջանում հակաթիւրքական գիծ է վարում:

Շահերի նման դասաւորութիւնը մեծապէս նպաստում է թիւրքիային և նա կարճ ժամանակում այնպէս է կազդուրւում, որ յաջողւում է նրան ջախջախել յունական զօրաբանակը և խայտառակ փախուստի մատնել:

Միջանկեալ ասենք, որ Յոյն. թիւրքական պատերազմի ժամանակ, Արեւելեան Անատոլիան միանգամայն դատարկւում է թիւրք կանոնաւոր զօրքերից և Կովկասեան սահմանների պաշտպանութիւնը թիւրքիան ձգում է տեղական անկանոն ու անվարժ խմբերին: Յոյները, որպէսզի կարողանան թիւրք զօրքերի կենտրոնացման տառջն առնել, պատուիրակութիւն են ուղարկում Հայաստան, որ վերջինս Արեւելեան ճակատից պատերազմական գործողութիւններ սկսի թիւրքիայի դէմ փոխարէնը խոստանալով զբաղական ու զինական օժանդակու-

Թիւն, ինչպէս և խոստանում են Հայաստանին կցել Տրապիզոնի վիլայէթը, յունական այդ հոծ շրջանը, ամառովիւ միայն տեղական ազգաբնակչութեան ներքին աւտոնում իրաւունքները:

Սակայն յոյների այդ առաջարկը միայն առաջարկ էլ մնաց, քանի որ շատ չանցած յոյն զօրաբանակը զլխովին շարդւեց:

Յոյն թիւրքական պատերազմի շրջանում Հայաստանի Հանրապետութեան յաջողւեց վերջ տալ իր երկրի ներքին ապստամբութիւններին: Տեղական թուրքերի թշուառական զինքը դէպի հայ ժողովուրդն ու նրա կառավարութիւնը, ներշնչած Ադրէշանի և տաճիկ էմիրարների կողմից, այնքան սանձարձակ ու դուրսէ էր դարձել, որ այլևս հանել էր Հայաստանի խաղաղ ազգաբնակչութեան համբերութիւնը: Հայ խաղաղ շինականը, որ աշխատանքի մեծ պահանջ էր դրում և ցանկանում էր իր աւեր տնտեսութիւնը վերականգնել, Հայ կառավարութեան առաջ պահանջ էր դրել՝ երկրի աւաղակարները քանդել և հայ երկրում վերջնական խաղաղութիւն հաստատել:

Հայ կառավարութիւնն էլ ձեռնարկում է երկրի աւաղակային որջերին վերջ տալու գործին: Հայ զօրքերի հետ միասին հայ գիւղացին էլ գէնք է վերցնում հայ երկրի խանգարիչ ու ներքին թշնամիներին զսպելու համար: Կորճ ժամանակում կառավարութեան յաջողում է աւաղակային որջերը մաքրելու և երկրը վերջնականապէս հանգստացնելու դաւաճելը ոյժերի զործունէութիւնից:

Այս շրջանում է ահա, որ թէև մի կողմից հայ երկիրը խաղաղութեան մէջ սկսում է բարգաւաճել, դարձանալ ու պահ մի շունչ քաղել, համաճարակներն ու սովն ուրւականից ազատւել, սակայն միւս կողմից՝ քաղաքական մթնոլորդը նորից մթաղնում է և Հայաստանի հանդէպ նոր իրադարձութիւնները պալիս են աննպաստ դասաւորւում:

Յոյնները պարտութիւնից յետոյ Թիւրքիան ոտքի էր կանգնել ու կազդուրւել: Նրա կանոնաւոր զօրքերն էլ մասը նորից փոխադրւել էր Հայաստանի ու Կովկասի սահմաններ՝ Կարաէքիր փաշայի հրամանատարութեամբ. բոլշիկեան Ռուսատանն էլ միւս կողմից ջարդ ու փշուր էր արել Կովկասի, Դինիկինի, Իւզենիչի և այլ միապետական սպիտակ զօրամասերը, հզօրացել ու իր կարգերն էր տարածում՝ ծայրագաւառներում. այլև Թիւրքիայի ու Արևելքի հետ ուժեղացնում էր իր կապերը: Անդլիան, ինչպէս և Իտալիան, փոխել էին իրենց թշուառական վերաբերմունքը դէպի Թիւրքիան, գաղաղցել էին իրենց ահնջայտ օգնութիւնը սպիտակներին ու թուրք հակաբոլշևիկ ոյժերի կազմակերպութիւնը, և կարճէք բանէլէին խաղաղ ու նորմալ քաղաքական փոխ-յարաբերութիւններն ուղին:

Բնական է, որ այսպիսի պարագաներում Հայաստանը պիտի կորցնէր իր նախկին հետաքրքրութիւնն ու ուշադրութիւնը գաղնակից հզօրների աչքում, քանի որ նրա երկու հարեանները, սուսն ու տաճիկը, կազդուրւել ու հզօրացել էին: Այս հանդամանքին էլ մեծապէս պիտի վերագրել այն քաջայայտ խուսափումը, որ ցոյց էին տալիս եւրոպական մեծ ու փոքր պետութիւնները Հայաստանի վրա ստանձնելիք հոլա-

նաւորութեան խնդրում: Մինչդեռ ստանց հավանաւորութեան
Հանրապետական Հայաստանի ապագան պատկերանում էր ա-
հաւոր ու վտա՛ գալից: Եթէ սրա վրա աւելացնելու լինենք նաև
հայ քաղաքական կուսակցութիւնների իշխանութեան զուլիս
անցնելու հիւսիսային վրցութիւնը, պատկերը պարզ ու լրիւ
կլինի:

Ահա այսպիսի մի խառնակ ու ծանր մոմենտում տեղի
է ունենում Լեզրանի բանակցութիւնները, Հայաստանի կա-
ռավարութեան հետ՝ Երևանում:

Լեզրանը երկու անգամ Հայաստան է եղել. մէկ 1920
թւի ամառւա ամիսներին, նախ քան հայ—թրքական պատե-
րաղմը, մէկ էլ նոյն թւի աշնանը, երբ տաճիկներն արդէն
զրաւել էին Ղարան և Ալէքսանդրապոլը (այժմեան Լենինա-
կանը):

Լեզրանն իր առաջին բանակցութիւնները վարել է Հ.
Օհանջանեանի կառավարութեան, կամ աւելի ճիշտ՝ Բիւրօ կառա-
վարութեան հետ, որը միաժամանակ և պարլամենտական ի-
րաւունքներով էր օժտւած և Հ. Յ. Դաշնակցութեան. նշանա-
կում է, եղած բոլոր կառավարութիւններից ամենից լիազօրն
էր: Ահա այդ ժամանակ զինուորական մինիստրի պաշտօնը
յանձնւած էր Ռ. Տէր Մինասեանին (Ռուբէն փաշային), իսկ
աշխատանքի և զինդատնտեսական նախարար էր Ս. Վլադիսլաւ:

Լեզրանի զխաւոր առաջարկը հետեւեալին էր յանդում.
Խորհրդային Ռուսաստանը առաջարկում էր Հայաստանի Հան-
րապետութեան իրեն տրամադրել Ալէքսանդրապոլ-Ղարա-Սարի-
ղամիշ երկաթուղագիծը, որի փոխարէն Հայաստանին խաւա-

նում էր դրամական, ապրամթերքի և պարէնի օժանդակու-
թիւն: Ռուսաստանը Հայաստանում զօրք չէր պահելու, միայն
զխաւոր կայանների պահապանութիւնը յանձնելու էր սահ-
մանափակ թւով ռուս զինուորների: Թիւրքիայի կողմից պատ-
նացող վտանգի դէպքում Հայաստանի սահմանների պաշտպա-
նութիւնը՝ իր վրա էր վերցնելու Ռուսաստանը:

Հայաստանի կառավարութիւնը երկար ժամանակ ձգ-
ձգում է Լեզրանի առաջարկները և վերջնական ոչինչ չէ ա-
սում: Միայն ձեւական առարկութիւն է անում, թէ նման աղ-
տը ոտնայարումն է Հայաստանի անկախութեան: Եւ ամբողջ
երկու ամիս Լեզրանը Հայաստան մնալուց յետո՝ ձեռնունայն
վերադառնում է Թիֆլիս:

Այն ինչ քաղաքական դէպքերը դահավիժօրէն տեղի են
ունենում և գալիս պայթում են Հայաստանի գլխին:

Մեղաւորը դարձեալ Բիւրօ կառավարութիւնն էր. կամ
աւելի ճիշտ, նրա երկիր կառավարելու անընդունակութիւնը: V

Ահա այս ծանր մոմենտին, երբ Դաշնակիցները իրենց
ուշադրութիւնը կենտրոնացրել էին այլ կողմ, Թիւրքիայի նը-
կատմամբ էլ նրանց տեսակէտը բաժանւում էր. բնականաբար
էլ Հայաստանն այլեւ անմիջական օգնութիւն ու պաշտպանութիւն
չէր կարող ստանալ Դաշնակիցներից. ահա այդ ժամանակ Բիւ-
րօ կառավարութիւնը փոխանակ խուտափելու և յարաբերու-
թեան մէջ մտնելու Թիւրքիայի հետ և խաղաղութեամբ վերջ
տալու խնդիրներին, անզօրյա քայլ է անում և առիթ ստեղծում
նրա թշնամութեան:

Վառելանիւթի պակասութեան պատճառով, Բիւրօ կա-

առավարութիւնն ձևոնարկում է Օլթիի շրջանի անխառնքերի տէր դասնալ և օգտագործել տեղի քաղաքացիները Հայաստանի երկաթուղիների համար, որովհետև Բաղուն գաղաքել էր համար և մագուի մատակարարել Հայաստանին:

Եւ քանի որ Օլթիի շրջանը համարում էր չէզոք գոտի, ուստի Տաճկական Արեւելեան զօրաբանակի պէտք Կարաբէքիր Բեգիմը և արտաքին գործոց նախարար Բէքիր Սամի Բէյը նամակներ և ուղղում Հայաստանի զօրքերի հրամանատար Նազարէզովին և արտաքին գործերի նախարարին, ունեց մէջ գանգաւում են, թէ հայկական զօրամասերի առաջ շարժելը Մեքէնէի ուղղութեամբ տպօրենի քայլ և սպառնալիք է Թիւրքիայի դէմ, ապա առաջարկում են երկու հարեան ժողովուրդներին մէջ բարի զբաղակաւն յարաբերութիւն պահպանելու համար, յետ քաջի հայ զօրքերը գրաւած շրջաններից թոյլ տալ իսկամ ժողովուրդին վերադառնալ իրենց բնակավայրերը, այլև առաջարկում են Բրեստի և Բաթումի դաշնագրերի սահմաններում բանակցութիւններ սկսել:

Հայաստանի Բիւրօ կառավարութիւնը հարկաւոր ուշադրութեան չէ պահում այդ առաջարկները, այլ անդադրաւոր ձեռք կարգադրում է ընդհանուր գործերի քաղաքացիական Տէր-Յակովբեանին ստորագրել պատասխան համակները և ուղղութեամբ լսող պատկանելոյն:

Բիւրօ կառավարութեան համակները էտեան ոչինչ չէին անում, այլ ձեռնարկէին առարկում էին, թէ հայ զօրքերի առաջ շարժելը Թիւրքիայի դէմ չէ ուղղւած, այլ նորապէս գնում են հայկական հրապարակները գրաւելու, որ խաղաղ մեղմումն

ազգաբնակչութեան հետ գործ չունեն և այլն...

Յամենայն դէպս այդ ձեռք չէր, որ Հայաստանի կառավարութիւնը պիտի պատասխանէր Թիւրքիայի ներկայացուցիչներին, այն Թիւրքիայի, որ նոր էր ջարդել Յունաստանի հարիւր հազարանոց կանոնաւոր զօրաբանակը և մէկից աւելի անգամ աւերումներ էր կատարել ու տիրել Հայաստանին:

Եթէ մենք մեզ կարող էինք համարում չափւելու մեր դրացի վրացու և ադրբէջանցու հետ, ապա վրաւեցողութեան աւելի տակա ու խելամոռութիւն էր պէտք Հայաստանի երկու հզօր հարեանների հետ՝ Ռուսաստանի և Տաճկաստանի: Մի բան, որ բնաւ չենք տեսնում վերջին բանակցութիւնների ժամանակ: Եւ որը պատճառ դարձաւ մեր երկրի, մեր ժողովրդի, ինչպէս և Հ. Յ. Դաշնակցութեան վտանգման:

Այս ճշմարտութիւնը ժամանակին չըմբռնեց Բիւրօ կառավարութիւնը, այսօր էլ նրա ղեկավարները շարունակում են նոյն սխալը հետու հորիզոնների տակ . . . —

Դաշնակից պետութիւնները նկատի են առնում Քեամալական Տաճկաստանի և բոլշեիկ Ռուսաստանի հզօրանալը և ըստ այնմ էլ անմիջապէս յարմարեցնում են իրենց յետագա քայլերը. մեղմութիւն են մտցնում իրենց քաղաքական գծի մէջ. դադարեցնում են բացարձակ հալածանքները Սովետների դէմ, այն ինչ Հ. Յ. Դաշնակցութեան ղեկավարներն են միայն, որ նոր նոր «անհաշտ գաղափարական պայքարի» ուղին են բռնում. մի ուղի սակայն, որը կարող ենք ասել, մշակած ու գծւած էր դեռ ևս Բիւրօ կառավարութեան օրօք: Մի բան, որը պատճառ

զարձաւ ինչպէս Հայաստանի Հանրապետութիւնն կառավարող ֆիւլի վիճման, նմանապէս և հայ ժողովրդի և հայ երկրի մարտիրոսագրութեան ու աւերման 1920—21 թւերին:

Գ.

Բիւրօ կառավարութեան պատասխանը, բնականաբար, պիտի վերաւորանք նկատուէր և գրգռէր թիւրք կառավարութեան երկու աչքի ընկնող ներկայացուցիչներին՝ Արեւելեան զօրաբանակի հրամանատարին և Անգորայի արտաքին գործոց նախարարին:

Հետեանքը լինում է այն, որ թիւրք Արեւելեան զօրաբանակը հրաման է ստանում առաջ շարժուի և պատերազմական գործողութիւններ սկսի Հայաստանի դէմ:

Արդարութեան տուրք յատուցանելու համար, այստեղ պիտի ասենք, որ Բիւրօ կառավարութեան որոշման դէմ բողոքում և դէմ է արտայայտում Հայաստանի զօրքերի ընդհանուր հրամանատար գեներալ Նազարբէկովը: Նա գտնում է, որ նման ձեռք նամակների յղումը պատճառ կարող է դառնալ երկու հարեան երկրների յարաբերութիւնների խզման և պնդում է, որ նորմալ յարաբերութիւնների տեսակէտից անհրաժեշտ է իր ստորագրութիւնը կարարէքրի փաշային ուղարկել իւր նամակի տակ, իսկ մեր արտաքին գործերի նախարարը պիտի ստորագրէ Բէքիր Սամի Բէյին ուղղած նամակը:

Սոյն կարծիքը բաժանում է նաև զինուորական նախա-

րար Բուրէն փաշան:

Նազարբէկովն ու Բուրէն փաշան գտնում են նաև, որ Անգորայի ներկայացուցիչների համակները յարմար առիթ են ներկայացնում երկու հարեան պետութիւններին երես առ երես կանգնել և ծանօթանալ երկու կողմերի պահանջներին հետ: Մի բան, որ անհրաժեշտ էր, քանի որ հին ճշմարտութիւն է, որ հակառակորդ կողմերի տեսակցութեամբ՝ թշնամութեան կէսը վերանում է:

Թիւրքիայի և Հայաստանի տեսակցութիւնն անհրաժեշտ էին նաև այն տեսակէտից, որ այդ շրջանում Հայաստանին խաղաղութիւն էր պէտք, որպէսզի հնարաւոր լինի հայ երկրի ու զօրքի կազդուրման թիւրի աշխատանքներն իրենց վախճանին յանգէին:

Սակայն Նազարբէկովի փորձառութիւնն ու խոր ուղիներն ապարդիւն են անցնում. Բիւրօ կառավարութիւնն ուշադրութեան չէ առնում հին զօրավարի ասածները, անց է կացնում իր տեսակէտը, նայն իսկ վերաւորական նկատելով մի անկախ պետութեան համար, անպաշտօն նամակներին, պաշտօնական բնոյթ տալ և կառավարութեան պատասխանին արժանացել:

Եւ պայթում է Հայ թիւրքական պատերազմը:

Մենք պատեհ չենք նկատում տալ այստեղ պատերազմի մանրամասնութիւնները, դա մեր նպատակից դուրս է, որքան էլ դա կարեւոր համարենք ցոյց տալու համար Բիւրօ կառավարութեան կազմակերպչական անընդունակութիւնը, այլ մենք

կանգ կանոններ պատերազմի կործանիչ հետեանքների վրա, որոնք զալիս են փաստօրէն վերացնելու Հայաստանի Հանրապետութեան գոյութիւնը:

Հայ-թիւրքական պատերազմը հայ երկրին հասած մեծագոյն աղէտն էր, որովհետեւ նա հարւածեց հայ ժողովրդի գոյութեան հիմունքները: Այդ պատերազմը ժամանակին կարելի էր կանխել, բայց Բիւրօ կառավարութիւնը կարծես դիտմամբ չկանխեց:

Եւ նա չկանխեց շատ սարգ պատճառով, որովհետեւ մի կողմից նա գերազնահատեց իր ուժերը, իսկ միւս կողմից անգիտացաւ հակառակորդի կարողութիւնը:

Կար և մի այլ հոգեբանական հանգամանք, որ Բիւրօ կառավարութեան մղեց զէպի պատերազմ. դա նրա երկրի ներսն ունեցած մի շարք յաջողութիւններն էին:

Այդ յաջողութիւններին պիտի վերագրել նաև Բիւրօ կառավարութեան տեականութիւնը: Մինչդեռ նա օտեղծեց ընդհանրիկ պայմաններում և յատուկ նպատակի համար:

Բիւրօ կառավարութեան գոյութիւնը կապւած էր բոլշևիկների մայրսեան ապստամբութեան հետ:

Յեղափոխականների ապստամբութիւնը պատճառ դարձաւ Բիւրօ կառավարութեան ստեղծելուն. այդ ապստամբութեան վերջ տալով՝ սահմանափակում էր նաև նրա դերն ու գոյութիւնը:

Բայց Բիւրօն չբաւականացաւ այդ դերով. բոլշևիկեան

ճնշումից յետոյ, նա շարունակեց մնալ կառավարութեան գլուխ և կատարել պարլամենտական ֆունկցիաներ: Սա եղաւ պատճառ ինչպէս երկրի, նմանապէս և Հ.Յ. Դաշակցութեան զըժբախտութեան:

Մինչդեռ Բիւրօ կառավարութիւնից առաջ, որոշ շափով, յաջողել էր երկիրը երկիշխանութիւնից հանել և մտցնել նորմալ վարչաձև. այն ինչ Բիւրօ կառավարութեան հետ զուգընթաց նորից կուսակցական օրգանների գերիշխանութիւնն է հրապարակ գալիս:

Այսպիսով երկրի մէջ նորից ծայր է առնում իշխանութեան երկուութիւն և պատճառ դառնում պետական օրգանների և Հ.Յ. Դաշակցութեան կոմիտէների փոխադարձ մրցութիւններին, որոնք առաջ են բերում ներքին անիշխանութիւն և պարտակատարութիւնների թերութիւն:

Վերջին հանգամանքը երկրի իշխանութիւնը զօրեղացնելու փոխարէն՝ թուլացնում և անոյժ է վարձնում կառավարութեան կարգադրութիւնները:

Երկուութիւնը բովանդակ երկրի մէջ առաջ է բերում տեղական իշխանութիւնների կազմալուծում, որը միծ չափով երևան է գալիս հայ-թիւրքական պատերազմի ընթացքում:

Սա Բիւրօ կառավարութեան հետ կապւած խոշորագոյն չարիքն էր, որ ժամանակին չգիտակցեց և առաջն առնելու համար միջոցների չձեռնարկեց:

Պարլամենտարիզմի ու յեղափոխական կառավարութեան գործելակերպի խառնուրդը պատճառ դարձաւ երկրի մէջ ընդհանուր շփոթի, որի հեղինակը Բիւրօ կառավարութիւնն էր:

Բնական էր, որ այսպիսի պայմաններում, որքան էլ թւական ու ռազմական գերիշխանութիւնը հայի կողմը լինէր, յաջողութիւն սպասելը անմտութիւն կլինէր:

Եւ այդպէս էլ եղաւ:

Զնայած որ հայ զօրքերը կրկնակի էին թիւրք զօրքի հետ համեմատած, աւելի լաւ էին հագնւած, լաւ պարենաւորւած, ռազմամթերքի առատութեամբ ու տեխնիքական յարմարութիւններով օժտւած, այնուամենայնիւ պարտուեցին:

Թիւրք զօրքերը համարեա թէ առանց կռիւ մտան մեր երկիրը և շատ կարճ ժամանակում վերցրին մեր անասիկ ու լաւ զինւած ամբուրթիւնները, գերի վերցրին մեր զօրքերի ստաբ մասը, տէր դարձան մեր հարստութիւններին, աւերի ու սրածռութեան ենթարկելով մեր վերաշինած աւաններն ու քաղաքները իրենց բնակչութեամբ...

18 Թւին Անգլիայի մեզ շնորհած հողամասերին թիւրքերը նորից տէր դարձան և հայ ժողովուրդը նորից սեղմեցին նախկին փոքր սահմաններին մէջ. նորից պատճառ դարձան տեղահանութիւնների ու գաղթի...

Անգլիան, նրա հետ նաեւ միւս գաշնակիցները, այս անգամ անտարբեր դիտողի դերում, տեսնում էին հայերէնիքին ու հայ ժողովրդին հասնող դժբախտութիւնն ու ծպտուն չէին հանում:

Դերերը փոխւել էին:

Անգլիան այդ ձևով սիրաշահում էր թիւրքիային. այդ բանը նրան թելադրում էր իր շահը, որի հանդէպ կոյր ձևացաւ Բիւրօ կառավարութիւնը:

Կարծէք հայ-թիւրքական պատերազմը անհրաժեշտ էր, որպէսզի Բիւրօ կառավարութիւնը կարողանար ըմբռնել քաղաքական ոյժերի նոր դասաւորութիւնն ու Անգլիայի պատիւ գերը Հայաստանի հանդէպ:

Մի բան, որ արդէն ուշ էր:

Արդեօք այլ հնարաւորութիւն չկար այդ ժամանակ դէթ հայ ժողովուրդն ու նրա հրկրի սահմանները փրկելու:

Կար. սակայն այդ հոարաւորութիւնն էլ չկարողացաւ Բիւրօ կառավարութիւնը նպատակայարմար ձևով օգտագործել:

Ս. Դա Սովետական Ռուսաստանի ներկայացուցիչ Լեզրանի երկրորդ անգամի բանակցութիւնն էր, որից Հայաստանի կառավարութիւնը, իր պարտութեան շրջանում անգամ, ձեռնահասութիւն չունեցաւ:

Սակայն այս անգամ յանցանքը Բիւրօ կառավարութեանը չէր, այլ Ս. Վրացեանի զլխաւորութեամբ կազմած կառավարութեան, որ բանակցութիւն էր վարում Լեզրանի հետ:

Հայ ժողովրդի այդ դժբախտ մոմենտում, Ս. Վրացեանի կառավարութիւնը նոյն թափամտութիւնը հրապարակ հանեց, ինչ որ ժամանակին հրապարակ էր հանել Բիւրօ կառավարութիւնը:

Որպէսզի մեր ասածներն անհիմն չը նկարեն և փաստացի լինեն, մենք փոքր ինչ մանրամասնօրէն պատկերացնենք երկու կողմի առաջարկներն ու առարկութիւնները:

Նախ քան հայ-թիւրքական պատերազմը, մենք տե-

սանք, թէ ինչպէս Բիւրօ կառավարութիւնը ամիսներ շարունակ Լեզքային ու սենց Երեւանում և չկարողացաւ հայ երկրի ու հայ ժողովրդի իրական շահերին ծառայեցնել Մոսկուայի բարեհաճ արամադրութիւնները: Ինչպէս և չկարողացաւ մոմէնտից օգտուել և կարարէքիւր փաշայի և Բէքիւր Սամի Բէյի հետ յարաբերութեան մէջ մտնել ու բանակցութիւնների միջոցով կանխել Հայ-թիւրքական պատերազմը: Այլ թէ մէկը և թէ միւսը նկատուեց Հայաստանի արժանապատուութիւնը վիրաւորող հանգամանք:

Մինչդեռ քաղաքական կացութիւնը պարզ էր. երկու հզօր պետութիւններ՝ Անգլիան և Սովետական Ռուսաստանը, մրցման մէջ էին. առաջինը սիրաշահել էր ուղղում թիւրքիային, Սովետական Ռուսաստանից բաժանելու համար. իսկ երկրորդը Հայաստանի վրայով կաշուել էր ուղղում թիւրքիային, որպէսզի յարւածէ Անգլիայի մտադրութիւններին: Երկու զէպքում էլ մրցութեան օրիէկտը թիւրքիան էր, իսկ իրադարձութիւնների վայրը Հայաստանը:

Եկեղացի և քաղաքական ձկունութիւն ունեցող մի կառավարութիւն կարող կլինէր նման բարեյաջող պայմաններում՝ մոմենտը օգտագործել յօգուտ իր երկրի և իր ժողովրդի շահերի: Մինչդեռ Բիւրօ կառավարութիւնը չափողանցացրեց Հայաստանի անձեռնմխելիութեան ըմբռնումը և պատճառ դարձաւ հայ ժողովրդի սրածուծութեան:

Այն ինչ թիւրքիան ստեղծւած դրութիւնը խեղացիօրէն օգտագործեց յօգուտ իր շահերի ու հզօրանալուն:

Բիւրօ կառավարութիւնը չըմբռնեց, որ շահերի վրա

հիմնւած քաղաքական համակրութիւնները զարգարում են այն մոմենտին, երբ շահերի օրիէկտը փոխւում է: Բիւրօ կառավարութիւնը ամուր փարած դաշնակիցներին, հաւատարիմ աղջկանման, չուղեց փոխել իր փեսացւին, երբ փեսան ամարդօրէն վաճառքի էր հանել իրան:

Եւ մինչև այսօր էլ այդ հաւատարմութիւնը պահպանում են Հ. Յ. Դաշնակցութեան ներկայիս ղեկավարները, չնայած որ, 1923 թ. Լօզանի կոնֆերանսում, Դաշնակիցները վերջնականապէս վաճառեցին հարսնացուին:

Դ.

Ինչ կշահէինք, եթէ ընդունէինք Լեզքանի առաջին և հակցութեան ժամանակ արւած առջարկները:

Այդ ժամանակ Սովետական Ռուսաստանը, մեր ունեցած տեղեկութիւնների համաձայն, չէր ցանկանում Հայաստանի Խորհրդայնացումը: Լինինը գտնում էր, որ Հայաստանի բարձրաւանդակի խորհրդայնացումը կարող է վարկաբեկիչ լինել Սովետների համար, քանի որ Ռուսաստանն այդ տարիներին ինքը կարիք ունէր օգնութեան, մինչդեռ Հայաստանի Խորհրդայնացման զէպքում Ռուսաստանն անհրաժեշտօրէն օգնութեան պիտի հասնէր հայ ժողովրդին, որը տանջւում էր սովի և համաճարակների ձեռքին: Դրա համար էլ հայ բուլշեիկների Հայաստանի խորհրդայնացման պնդումը կենտրոնի կողմից լիտ էր մղւում:

Վերջին շրջանում միայն, երբ Հայաստանի Հանրապետական կառավարութիւնը յամառեց ընդունել Լեզրանի առաջարկները, այն է՝ մերժեց յանձնել Սովետական Ռուսաստանին Ալէքս.-Ղարս-Սարիղամիշ երկաթուղադիժը, որը անհրաժեշտ էր նրան, այդ ժամանակ միայն հայ բոլշեիկներէ պնդումէն իւր արժէք ստացան:

«Առանց Հայաստանի խորհրդայնացման անկարելի է կովկասը խորհրդայնացնել, որովհետեւ ուժեղ և կուռղ զօրաբանակ միայն Հայաստանն ունի»։ պնդում էին հայ կոմմունիստները:

Հանրապետական կառավարութեան, ինչպէս և Հ. Յ. Դաշնակցութեան շրջաններում այն իշխող կարծիքը կսր, որ անկարելի է վստահել ու հաւատալ բոլշեիկներին անկեղծութեանը: Եւ այդ հանգամանքը հայ—սովետական փոխյալարելութիւններին ու մերձեցման խնդրում ճակատադրական նշանակութիւն ունեցաւ:

Եթէ Հայաստանի երկաթուղադիժը յանձնուի բոլշեիկներին, մտածում էին դաշնակցական և այլ հոսանքի պատկանող քաղաքական գործիչները, այն ժամանակ Ռուսաստանն ազատ իրաւունք էր ստանում մեծաքանակ զօրքեր կենտրոնացնել, թէկուզ հայ—թիւրքական սահմանադիտում: Թէև այդ զօրքերը նախատեսւում էին թիւրքիայի համար, որոնք կարիքի դէպքում օգնութեան պիտի գնային տաճիկական զօրւորին ընդդէմ յոյներին, բայց կարող էր պատահել նաև, ենթադրում էին, որ այդ զօրքերը, օրին մէկը, իրենց երեսը շրջէին Հայաստանի ներսը Հանրապետական կառավարութեան դէմ, զինական ուժով վերջ տային Հանրապետութեան և տեղը հաստատէին

տէին կոմմունիստական կարգեր:

Եթէ մի րոպէ ենթադրէինք վերջին կարելիութեան, այդ դէպքում իսկ հայ ժողովուրդը ոչինչ չէր կորցնի: Կորցնողը կլինէր, ծայրայեղ դէպքում, մի միայն Իտալիցութիւնը. կամ աւելի ճիշտ, նրա մի քանի տասնեակ ականաւոր գործիչները, որոնք լաւ դէպքում պիտի վտարւէին երկրից, իսկ վատ դէպքում քշւէին հիւսիսային տունդրանները. հայ աշխատաւոր մասսան իր ամբողջութեամբ կը մնար երկրում և բնաւ չէր տուժի: Իսկ դաւով Հայաստանի սահմաններին, նա կմնար անփոփոխ, ամբողջապէս նախկինը, եթէ աւելին չեն թաղւորենք: —

Լեզրանի բանակցութիւնների ժամանակ, Բիւրօ կառավարութիւնը, միշտ էլ աչքաթող էր անում մի կարևոր հանգամանք. դա այն էր, որ եթէ Լեզրանի միջոցով Մոսկւան պահանջում էր իրան տրամադրել Հայաստանի երկաթուղադիժը իր զօրքերի փոխադրութեան համար, ապա ուրեմն շատ պարզ էր, որ նախքան Հայաստանի երկաթուղադիժն հասնելը, բոլշեիկները տէր պիտի դառնային նաև Վրաստանի կամ Աբխազիայի երկաթուղադիժերին, այլապէս անհնարին կլինէր ուսումնասիրել տեղափոխութիւնը թիւրքիայի սահմանները: Իսկ եթէ Ռուսաստանը տէր էր դառնալու վերոյիշեալ Հանրապետութիւններին, վերջ ի վերջո՝ Հայաստանի տրամադրութեան այս կամ այն խնդրի նկատմամբ, ինչ նշանակութիւն պիտի ունենար փաստօրէն. եթէ Հայաստանի կառավարութիւնը կամովին չզիջէր, այն ժամանակ բոլշեիկները իրենց մտադրութիւնը ուժով կիրականացնէին:

Մինչդեռ Բիւրօ կառավարութեան կամովին համաձայ-

նութեան դէպքում այն հաւանականութիւնը կար, որ նախ կարող էր պատահել, որ Հ. Յ. Դաշնակցութիւնը մասնաւորէն հաւանական չէր թափարկէր և ժամանակաւորապէս մնար կառավարութեան գլուխ, քանի որ Մոսկւային ձեռնադրէր Հայաստանի անմիջական խորհրդայնացումը: Վերջին դէպքում, Դաշնակցական կառավարութիւնը, բնականաբար, համադրածակցելու էր Սովետներին հետ և սերտ յարաբերութիւն էր պահելու կենտրոնի հետ: մի հանգամանք, որ ինքնին առիթ էր ծառայելու՝ վաղ թէ ուշ, խորհրդային կարգերի կամովին ընդունելուն, որպիսի նշաններ արդէն ցոյց էր տալիս Վրաստանի կոմիտէի օրդան «Աշխատաւորը»: Մի բան, որ հայ երկրի համար կրկնէր վերկոթիւն, քանի որ նրա կենդանի ու պատրաստի ոյժերը կմնային հայրենիքում և իրենց կարողութիւնները կտրամադրէին հայրենիքի կուլտուրա-տնտեսական զարգացմանը: Երկրի սահմաններն էլ մնալով 14 թիւնը, Հայաստանն այլևս չէր ապրել հողային այն մեծ տաղանապը, որ նա իրօք ապրում է ներկայիս:

Հայաստանին կցւաց մնալով Սուրմալի, Կողբի, Ղարսի, Արդահանի և Ախալքալաքի ընդարձակ ու բերրի հողամասերը, ոչ միայն հայ ժողովուրդը հողի պակաս չէր գրել, այլ և եղած հողերը լիովին կրաւէր երկրի ազգաբնակչութեան կարիքներին: Ինչպէս և դժարութեան չէր հանդիպի այլևս դրսի կէս միլիոն գաղթականութեան տեղաւորման ծանրակշիւ հարցը: Եւ ոչ էլ տեղի կարող էր ունենալ Ազգերի Լիգայի այսօրուս վերաւորական վաճառքը:

Մի բոլեւ նեթադրենք, թէ առաջին շրջանում Լիգրանի առաջարկները չընդունւեցին, որովհետեւ խնդիրները բաւական

նաչափ հասունացած չէին, մի կողմից գոյութիւն ունէր դեռ եւ Սեւրի գոշնադրի իրականացման հնարաւորութիւնը, միւս կողմից՝ Անգլիայի և դաշնակիցների ներկայացուցիչները հստակ էին Թիֆլիսում և հսկում էին հայ ժողովրդի ու նրա կառավարութեան վարքագծին: Թիւրքիայի կողմից դեռ եւ Հայաստանին բացարձակ վտանգ չէր սպառնում, Հայաստանն այդ ժամանակ ներքնապէս շատ էր ուժեղացել, որովհետեւ վերջնականապէս ճնշել էր ներքին դաւադիր ուժերին և վտարել երկրից դուրս, յաղթական Յունաստանը զինական դաշնագրութեան առաջարկ էր արել Հայաստանին և խոստանում էր Հայաստանին կցել Տրապիզոնի ընդարձակ վիլայէթը: Եւ վերջապէս Սովետները Հայաստանի խորհրդայնացման կարուկ պահանջ չէին դնում և ոչ էլ զգացում էր նրանց աներկբայիլի ոյժը: Ինչպէս և կար նաեւ այն ենթադրութիւնը, որ այսօր կամ վաղը, Տաճկաստանն անցնելու էր Դաշնակիցների կողմը և դուրս էր գալու Ռուսաստանն օղակող թշնամիների շղթայում...

Այս ամենը, ենթադրենք մի բոլեւ, կարող էր Բիւրօ կառավարութեան տարակուսանքի ու անվճռականութեան պատճառ դառնալ: Այլա ի՞նչով արդարացներ նրա բռնած յետադայի վարքագիծը, երբ քաղաքական պայմանները միանգամայն աննպաստ դասաւորւեցին Հայաստանի համար և հայ ժողովուրդը ուժասպառ տաճկական ճնշումներից՝ օգնութեան կարիք ունէր, սակայն նրան տրւելիք օգնութիւնը մերժւեց և պատճառ դարձաւ հայ ժողովրդի ֆիզիքական փչացման և նրա հողերի կէս առ կէս կրճատման:

Սա է ծանրակշիւ հարցը, որի պատասխանատուութեան

խոշոր բաժինը ծանրանում է Ս. Վրացեանի և նրա կառավարութեան վրա:

Բիւրօ կառավարութեան տապալումը և նրա տեղ Ս. Վրացեանի Կառավարութեան ստեղծումը, ոչ միայն հետեանք էր հայ-թիւրքական պատերազմում Հայաստանի ունեցած պարտութեան, այլ և այն բանի, որ Ս. Վրացեանի կառավարութիւնը կազմւած լինելով ռուսօֆիլ անձնակազմութիւններից, ենթադրւում էր, զիւրին կլինի նրա համար հաշտութեան լիզու գտնել Լիւբանի հետ և խնդիրներին յաջող ընթացք տալ: Մի բան, որ անհնարին էր Բիւրօ կառավարութեան համար Մայիսեանի գէղքերից յետո, քանի որ վերջինս հակաբոլշևիկ համբաւ էր վայելում:

Սակայն Ս. Վրացեանի կառավարութիւնը ևս տեւիին չարաւ հայ ժողովուրդն ու հալլենիքը ծանր վիճակից հանելու համար, քան արեւ էր Բիւրօ կառավարութիւնը: Անուաների փոփոխութիւնը չփոխեց Բիւրօ կառավարութեան վարած հիմնական քաղաքական գիծը. Ս. Վրացեանի կառավարութեան ամբողջ յետագա անյաջողութիւնները սրանով էլ պիտի բացատրել:

Ս. Վրացեանը փոխանակ մոմենտին յարմար քաղաքական նոր գիծ ընտրելու, մի կողմ նետելու ենթադրութիւնների վրա հիմնւած քաղաքականութիւնը և տեւիի ուղադրւած լինելու, նա ևս նոյն ճակատագրական սխալը գործեց, ինչ որ գործել էր Հ. Օսմանյանի կառավարութիւնը, շատի յետից ընկաւ և եղած քիչն էլ ձեռքից տւաւ...

Երբ Ս. Վրացեանի կառավարութիւնը կազմւեց, նրա առաջ միայն մի գործնական հարց էր դրւած. — բոլշևիկներին մի,

ջոյով փրկել հայ ժողովուրդն ու հայ երկիրը քեամալական բռնութիւնից. իսկ սա նշանակում էր՝ որոշ զինուորներ անել Լիւբանին և փոխարէնը օգտագործել բոլշևիկներին ոյժն ու ազդեցութիւնը յօգուտ հայ ժողովրդի:

Այս պարզ խնդիրն այնպէս անշուրջ կերպով խճճեց Ս. Վրացեանի կառավարութիւնը, որ փոխանակ հայ ժողովրդի ներկան զոհաբերելու և գէթ դրանով բաւականանալու, նա միաժամանակ զոհաբերում է նաեւ հայ ժողովրդի ապագան:

Սկսի դաշնագիրը, որ դաշնակցական կառավարութեան ամենամեծ յաջողութիւնն ու յաղթանակն էր համարւում, նրա ոչնչացման ահալ տեղի ունեցաւ ոչ թէ 1923 թիւն Լոզանում, այլ 1921 թ. Ալեքսանդրապոլ, երբ Ս. Վրացեանի կառավարութեան կարգադրութեամբ հայ պատգամաւորութիւնը պաշտօնապէս ստորագրեց հայ-թիւրքական նւաստեցուցիչ դաշնագիրը՝ հրաժարւելով նաեւ Սկսի պահանջներից: *)

Այսպիսով Սկսի դաշնագիրը մեռել էր փաստորէն Ալեքսանդրապոլում, իսկ Լոզանում միայն նրա թաղումն ու յուզարկ ստեղծութիւնը տեղի ունեցաւ «բարեկամ» դաշնակից պետութիւնների ներկայացուցիչների մասնակցութեամբ, անշուշտ, գլխաւորութեամբ Անգլիայի ներկայացուցիչ Կլըքընի...:

Եւ երբ, այդ առթիւ, այսօր էլ դաշնակցական մամուլը, կամ լաւ է ասել, Ս. Վրացեանը և նրա ընկերները, Լոզա-

*) Սկսի դաշնագրի ոչնչացման ահալ մասին ևս իմացա յետագայում, 1923 թ. նոյեմբերին, «Հայրենիք» ամսագրի Ս. Վրացեանի «Յուշեր մեռելի անցեալից» վերստին լուսաւր յօդուածից, ուր յիշատակւում է հայ պատգամաւորութեան Սկսի դաշնագրից հրաժարման ահալը:

նի կօնֆերանսի սովոր խիստ անապատներ են դործ ածում, որակելով ու խարազանելով Եւրոպական պետութիւնների, չտմարդի ու անմարդասէր՝ քաղաքականութիւնը, միշտ էլ նրանց փոխարէն կարմրում եմ, որովհետեւ ըստ իս, այդ որակումներն ամենից առաջ պիտի ուղղուեն իրենց վաւեր ամառի քաղաքականութեան դէմ, քանի որ Ալեքսանդրապոլի զաշնադիրը պարզ պրոցիդենս էր Լօղանի կոնֆերանսի համար...

Վերջին մոմենտին, երբ տաճիկներն Ալեքսանդրապոլում հայ պատգամաւորներին նեղն էին լծել և արագացնում էին հաշտութեան զաշնադրի ստորագրումը, Ս. Վրացեանի կառավարութեան առաջ միայն մի հարց էր դրւած՝ «փրկել հայ ժողովրդի ֆիզիքական գոյութիւնը»:

Սակայն նախադրած նպատակին հասնելու ինչ կարելի միջոցներ է զիմում նոր կառավարութիւնը:

Նախ՝ Ս. Վրացեանի կառավարութիւնը հաստատում է Ալեքսանդրապոլի մեր պատերազմութեան լիազօրութիւնները, ապա հետագայում է Սնդորայի կառավարութեան, յայտնում է հայ ժողովրդի փափաղը՝ վերջ տալ պատերազմին և Հայաստանի ու Թիւրքիայի միջև կնքել տեական հաշտութիւն: Այնուհետև Ս. Վրացեանը, որպէս արտաքին գործոց նախարար տեսակցում է և օտար պետութիւնների ներկայացուցիչներին հետ:

Թէ ինչ խորհուրդներ են տալիս զաշնադրից պետութիւնների ներկայացուցիչները Ս. Վրացեանին, հայ ժողովրդի այդ ահաւոր քաղցններին, մեղ յայտնի չեն. սակայն մեղ յայտնի են Սովետների ներկայացուցիչ Լեզրանի առաջարկներն ու պընտքները, որ արել է Ս. Վրացեանին վերջինիս կրկնակի տե-

սակցութիւնների ժամանակ:

Լեզրանի և Ս. Վրացեանի առաջին տեսակցութեան ժամանակ, «Կարճ զրոյցից պարզւում է», գրում է Ս. Վրացեան, որ «Սովետների ներկայացուցիչը միայն մի մտահոգութիւն ունէր. երբ պիտի Հայաստանի կառավարութիւնը համաձայնի կարմիր զօրամասեր մտցնել Հայաստան»:

Երկրորդ տեսակցութեան ժամանակ Լեզրանի պնդումը Ս. Վրացեանին նորից լինում է. «ռուսական զօրք մտցնել Հայաստան», և ապա առաջարկում է, «անմիջապէս յետ կանչել հայ պատերազմութիւնը Ալեքսանդրապոլից և խզել ամեն յարաբերութիւն տաճիկների հետ»:

«Լեզրանը հաւաստացնում էր, թէ տաճիկները դուրս չեն գալ ուստ զօրքի դէմ: Նա մեղադրում էր Հ. Օհանջանեանին և Ռ. Տէր-Մինասեանին, որոնք ժամանակին չեն ընդունել իր պայմանները և պատճառ են դարձել, որ տաճիկները գրուեն Կարսն ու Ալեքսանդրապոլը»:

Ինչ պատասխան է տալիս Լեզրանին նոր կառավարութեան ղեկի և արտաքին գործոց նախարար Ս. Վրացեան. «Ես դիտել եմ Լեզրանին, որ իր առաջարկութիւնը հաւասար էր Հայաստանի անկախութեան ջնջման. դրանով պիտի բացատրել նախորդ կառավարութեան (Հ. Օհանջանեանի) ընթացքը»:

«Ես», իհարկէ, շարունակում է Ս. Վրացեանը, չէի կարող համաձայնել Լեզրանի տեսակէտին... Ընցի ապա Լեզրանի առաջարկը անընդունելի էր և զուտ գործնական նկատումներով»:

Եւ դրն է Ս. Վրացեանի «գործնական նկատումը»:

այն, որ ուսուցողը մուտքը Հայաստան տուրք կանոնի էր դառնալ Բազմաբնակ Կարաբեքլիի ձեռքին իր բանակը առաջ շար-
ժեղույն...

Այստեղ արդեն Ս. Վրացեանը ոչ միայն իր քաղա-
քագետի՝ անկարողութիւնն է հրապարակ հանում, այլ և ուսու-
ցողի փոխարարութիւնն է մոռացութեան տալիս:

Հայ-թիւրքական պատերազմից առաջ, ինչպէս Բիւրօ
կառավարութիւնը անգլիականում էր թիւրքական զորքե-
րի կարողութիւնը, այնպէս էլ Ս. Վրացեանի կառավարութիւնը
գերազանցաւոր էր թիւրք զորքերի կարողութիւնները:

Խելացի քաղաքագետն ու կարող պետական գործիչը
երկուսից էլ կխուսափէր և իր անելիքները կը հիմնէր ուսու-
ցողութիւնների վրա: Մինչդեռ Ս. Վրացեանը և իր ընկերները
յադթութեան բողոքներն ոգևորում էին և անդուստի դառ-
նում, իսկ պարտութեան ժամանակ անարեւելում ու պանդա-
յի կնթարկում՝ համազանցապես իր հակառակորդի ու թերը:

Մինչև կարմիր զորքերը կը հասնէին, անարեւելում գրում է
Ս. Վրացեանը, տաճիկները կը ինչէին Երևանում ու Գարալա-
գանդում, եթէ ոչ աւելի հեռուները... Մինչև որոշակի Սո-
ստաֆայից ու Ղազարից շարժւէին, Երևանի մէջ քաղաքը վրա
չէր մնալ...

Կարծէք Ս. Վրացեանին յայտնի չլինէր թիւրք զորքերի
քանակը՝ նրանց կուր ընթացքում ցոյց տաւ՝ զգուշանալու
թիւնը: Ում էլ որ յայտնի չլինէր, Ս. Վրացեանին յայտնի պիտի
լինէր, քանի որ Կոնստնուսթնուպոլսի գտնւում էր ճակատում.
նրան շատ լաւ յայտնի էր, որ Կարաբեքլի փաշան հայ-թիւր-
քական պատերազմում միանգամից մէջ աւել էր հանել իր բոլոր

կենդանի ուժերը և թիւում աւելաւ պահեստի ոչ մի զինուոր չուներ.
այս բանն ապացուցւած էր ինչպէս անգլիական, նմանապէս և
վրացական աղբիւրներից: Ս. Վրացեանը այն էլ գիտէր, որ
հայ զորքերը իրենց քանակով կը կնակէին տաճիկներին, և
եթէ ուսուցողներն էլ օգնութեան հասնէին ու կուր բռնէին,
Կարաբեքլի փաշան ոչ միայն 14 թուականի սահմաններն էր
թողնելու, այլ և կարող էր պատահել, երկրի հեռուոր խոր-
քերը հասանջէր, քանի որ մինչև էրզրում ամայի էր և երկ-
րի մէջ թիւրք ազգաբնակչութիւն չկար, անշուշտ, եթէ մի-
այն ուսմանը վճռէին յետապնդել...

Ուրեմն Ս. Վրացեանի թիւրքական վտանգի պատկերա-
ցումը իրական չէր, այլ պարզապէս հետեանք էր նրա անա-
բեկման, մինչդեռ նման դէպքերում իսկական պետական
գործիչը սառնասրտութիւն է պահելու և շարունակելու է ան-
վերջով զեկավարել հայրենի երկիրն ու ժողովուրդը:

«Տաճիկներին պէտք է դնել կատարւած փոստի առջև,
պնդում է Լեւոնդեան Ս. Վրացեանին, և մինչև Ալեքսանդրապոլ
գրաւել բոլշևիկեան զորքերով: Երբ կարմիր բանակը կը ին-
Ալեքսանդրապոլի տակ, այն ժամանակ կարելի կը լինի խօսել և
Կարսի մասին»...

Եւ այս բոլորին ինչ է պատասխանում Ս. Վրացեանը.
նա թուրքիկ պէս միայն նախորդ կառավարութեան պատաս-
խան է կը կնում. «Գրանով նշանակում է մեր ձեռքով իսկ վի-
հը գլորել Հայաստանի պետութիւնը, իսկ Հայաստանի անկա-
խութեան ջնջումով հարւած կը հասցնուի և թիւրքահայ դատին»:

Լեւոնդեան Ս. Վրացեանին հասկացնում է նաեւ, որ տեղի
սենեկող հայ-թիւրքական պատերազմը պարզապէս հետեանք է

Սովետական Ռուսաստանի և Անգլիայի միջև տեղի ունեցող մրցութիւնների, հետևապէս Հայաստանի կառավարութիւնը որոշելու է իր վերջնական դիրքը:

«Կովկասեան ժողովուրդների համար մի ճանապարհ կա միայն. պնդում է Լեւորանը, նրանք կամ կախում պիտի վննին իմպերիալիստական Անգլիայից կամ սոցիալիստական Ռուսաստանից: Ուրիշ ելք չկա»:

Մի այլ տեղ աւելի որոշ է ասում. «Հայերը պարտաւոր են ընդմիջտ հրաժարել արեւմուտքից. նրանք իրենց ամբողջ յոյսը պիտի կապեն համաշխարհային յեղափոխութեան հետ: Անհեթեթիւն է մտածել ինչ որ ալիւրի մասին, որը ամերիկեան բանկիրների ու պատեհիների կողմից շարունակւում է իրեն մուրացկանի ողորմութիւն: Դրա դիմաց կա Կուրանի անսպառ ալիւրը: Ինչ զժաւրութիւն կարող է լինել մեծ Ռուսաստանի համար մի քանի միլիոն փութ ալիւր հասցնել եղբայրական Հայաստանին: Մի քանի ամսւայ մէջ Կուրանից Հայաստան կըբերի երեք միլիոն փութ ալիւր և զանազան ապրանք: Բայց զրա համար Հայաստանը պէտք է աւելի սերտ կապերով կապւի Ռուսաստանի հետ»:

Եւ այսպէս, ինչպէս տեսնում էք, Լեւորանի այնքան զործնական առաջարկներին, որոնք միայն դաժան համապատասխանում էին և Ս. Վրացեանի կառավարութեան նախընտրած նպատակին, այն է՝ «փրկել հայ ժողովուրդի ֆիզիքական գոյութիւնը», այլև պահել Հայաստանի սահմանները: Ս. Վրացեանը միշտ էլ խուսափական պատասխան է տալիս և կապում է հայ ժողովրդի անկախութեան հետ: Մի անկախութիւն»:

*) «Յուշեր մօտիկ անցեալից» Ս. Վրացեան. «Հայրենիք» ամսագրի № 1, նոյեմբեր, 1923 թիւ:

թիւն, որ ինքնին արդէն կորցրել էր հայ ժողովուրդը, քանի որ այդ սոսկալի շրջանում, միայն խօսք կար նրա ֆիզիքական գոյութեան պահպանման մասին...

Ջրի մէջ ընկած մարդու ոչ թէ շորը թրջելու մասին է, որ պիտի մտածել, այլ նրա խեղտելու: Ս. Վրացեանի մտածողութեան ամբողջ ծանրութիւնը ոչ այնքան հայ վտանգւած ժողովրդի ֆիզիքական գոյութիւնն էր որքան նրա անկախութիւն կորցնելը: Դրանից էլ առաջանում է նրա վտրած քաղաքականութեան անվճռականութիւնն ու սխալը:

Ս. Վրացեանը համաձայնում է հայ ժողովրդի ֆիզիքականը վտանգել. հայ երկրի սահմանները կըճատել, թիւրքահայ դատը միանգամայն ոչնչացնել, անգամ զոհարել Սերի դաշնագիրը, այս ամենը հնարաւոր է գտնում Ս. Վրացեանը, միայն հնարաւոր չէ գտնում ուս զօրքերի մուտքը Հայաստան, որովհետեւ դրանով «յեղաշրջումը մեր ձեռքով կատարւած կլինի»:

«Ամեն կէտում մենք կարող ենք համաձայնել, սակայն մի կէտում մենք անկարող ենք զիջել. առարկում է Ս. Վրացեանը Լեւորանին, Հայաստանը պէտք է մնա անկախ պետութիւն»: Իսկ Հայաստանի անկախութիւն Ս. Վրացեանի լիզով, նշանակում է, ուսական զօրքը մուտք չպիտի դործէ Հայաստան:

Անհեթեթիւնը պարզ է. Լեւորանը պնդում է, թէ տաճիկներին պիտի կատարւած փոստի առաջ կանգնեցնել. Ս. Վրացեանը Լեւորանից միայն «զիպլումատիկ միջամտութիւն» է խնդրում:

Լեւորանը առարկում է Ս. Վրացեանին, թէ «ուս զօրք»

քերի կենդանացումը Հայաստանի սահմանների մօտ կարող է միայն զգուհութիւններ առաջ բերել տաճիկների մէջ և առիթ ծառայել անցանկալի խօսակցութիւնների»։ Ս. Վրացեանը փոխանակ ընդունելու Լեզրանի ճիշտ առարկութիւնը, և հայ ժողովրդի բազմը կապելու Սովետների հետ, գաղտագողի տաճիկներին հետ «արագացնում է հաշտութեան բանակցութիւնները»։

Եւ այսպէս երկու ճակատի վրա գործելով՝ Ս. Վրացեանը առիթ է առնում թէ տաճիկների անվստահութեան և թէ Սովետների. այս է պատճառը, որ Ս. Վրացեանի կառավարութիւնը համարեա միաժամանակ կանգնում է թէ Կարաբէքիր փաշայի և թէ Լեզրանի վերջնագրերի առաջ։

Եւ փոխանակ տաճիկներից խուսափելու և Սովետներին յարելու՝ Ս. Վրացեանը երկու վերջնագրերն էլ միաժամանակ է ընդունում. Կարաբէքիրին Սերի գաշնադիրն է զիջում, Տաճկաստանին յանձնելով նաև Ղարսի, Արգահանի, Սուրմալուի հողմասերը, իսկ Լեզրանին զիջում է կամովին Հայաստանի իշխանութիւնը և աղաա մուսը է բացում կարմիր զօրաբանակի առաջ։ Երկուսից էլ վախենում էր Ս. Վրացեանը, երկուսն էլ իր սեփական ձեռքով է ստորագրում։

Այսպիսով Ս. Վրացեանը Թիւրքիային ընդմիշտ ազատում է Թիւրքահայ դատից և Սերի պարտականութիւններից, իսկ Ռուսաստանին յանձնում է Հայաստանը՝ յայտարարելով նրան Խորհրդային։

Այս է լինում Ս. Վրացեանի և իր կառավարութեան վարած «խեղացի» քաղաքականութիւնը հայ ժողովրդի ծանրագոյն բաղէին։

Այս են առում ահա անցեալի իրողութիւնները, որոնց զլխովայր է ներկայացնում Ս. Վրացեանը, ինչպէս և այդ իրողութիւնները ցոյց են տալիս, թէ ով է ցանկացել իսկապէս լիզու գտնել և ով է յետ մղել։

— Ս. Վրացեանի Հայաստանը, թէ Խորհրդային Ռուսաստանը։

Կամ Ս. Վրացեանի տերմինալօգիայով։

— Դաշնակցականները, թէ Բոլշեիկները . . .

Ե

Անցեալի իրողութիւններն աւելի հակասականալի են դառնում, երբ նկատի ենք առնում այն հանգամանքը, որ Ս. Վրացեանի մեղադրանքները բոլշեիկների հասցէին զրաւ՝ են ոչ թէ առաջ, այլ 1925 թւի Օգոստոսին։ Այսինքն՝ մի ժամանակ, երբ իրերն ու դէպքերն ալդէն դուրս էին եկել ենթադրութիւնների շրջանակից և կարելի էր իրական տեսլաներն վրահիմնած վերջնական եզրակացութիւններ հանել, բնաւ դուշակութիւններով զբաղել։

Ս. Վրացեանի մէջբերումներն ու յիշատակութիւններն այն ժամանակ, երբ Խորհրդային Հայաստանն արդէն ամբապընդել և կենդանութեան ու յառաջագիւժութեան մեծ նշաններ է հրապարակ հանել, երբ արդէն անկասկածելի է դարդել հայ ժողովրդի հաւաքականութեան, ինչպէս և նրա ազգային կեանքի ու կուլտուրայի անկախ ու ինքնօրէն զարգացման փառքը. այսպիսի մի մոմէնտում, բնականաբար, Ս. Վրացեանի հնի

փաստարկութիւնը ի վնաս հայ ժողովրդի ու նրա հայրենիքի՝ ոչ միայն համոզեցուցիչ չէ, այլև միանգամայն աւելորդ:

Ս. Վրացեանի երկար ու ձիւղ մէջրերումներն ու ճիւղերն «աղագայեցելու» համար, թէ «բոլշեկները սրտել են զոհել հայ ժողովրդին իրենց քաղաքական նպատակներին», կամ թէ՛ «բոլշեկներին համար հայկական հարց ու Հայաստան գոյութիւն չի ունեցել կամ գոյութիւն է ունեցել այն չափով, որ չափով որ հարկաւոր է եղել իրենց շահերի համար», և կամ թէ՛ «կոմմունիստներին համար առանձին սղակը հում վառելիք են համաշխարհային յեղափոխութեան խարոյկում», կամ աւելի մեղմ արտայայտած. «կոմմունիստներն և համաշխարհային յեղափոխութեան անունից ճշմոյց բոլշեկներին համար էլ հայկական հարցը քաղաքական զէնք է սոսկ, ինչպէս մինչ այդ եղել է անգլիական ու ֆրանսիական դիւանագիտութեան համար»... Նման պնդումները, զոնէ այսօր, քաղաքական լուրջ գործչի համար, միանգամայն անթոյլատրելի ոյտի համարել:

Ս. Վրացեանի համար միանգամայն անհասկանալի ու անմարտելի է այն հանգամանքը, թէ ինչպէս կարող է պատահել հայ ժողովրդի իրաւունքները պաշտպանել ու միաժամանակ թիւրք պետական գործիչներին հետ բանակցութիւններ վարել ու զաշնադրեր ստորագրել. այն էլ այնպիսի գործիչներին հետ, որոնք տաճկահայ ժողովրդի վանպիւրներն են եղել:

Ինչպէս կարելի է հաշտեցնել Լենինի հանրածանօթ դեկրետը, որով «յայտարարում է հայ ժողովրդին, որ Ռուսաստանի բանւորա-գիւղացիական կոտակարութիւնը պաշտպանում է Ռուսաստանի կողմից նշանակւած Տաճկաստանի հայերի իրաւունքը՝ ազատութեն ինքնորոշելու մինչև կատարեալ անկա-

խութիւն», և որ «այդ իրաւունքի զործադրութիւնը հնարաւոր է միայն հայ ժողովրդի ազատ հանրաքւէի համար բացարձակօրէն անհրաժեշտ մի շարք նախնական երաշխիքների պայմանով» այն է, ամենից առաջ, «հեռացնել Տաճկաստանի սահմաններից զօրքը և անմիջապէս կազմել հայկական ժողովրդական միիցիա Տաճկահայաստանի բնակիչների անձի և զոյքի ապահովութեան համար»...

Իսկ միւս կողմից «տաճիկների հետ վարած բոլոր լաւակցութիւնների ու ստորագրած դաշինքների մէջ՝ Բրեստ-Լիտովսկից մինչև Մոսկւա, անհանգստանում է Վրացեան, հայերը զոհ են բերւած էնվերներին ու Մուստաֆա Քէմալներին»:

Ս. Վրացեանը, եթէ փոքր ինչ իրեն չի դոթիւն սպառնալիք և խորանար անցեալի իրողութիւնների մէջ և միակողմանի ու կոյր ձեւանալու փոխարէն, փոքր ինչ սառնասրտութիւն ու քաղաքական գործչի օրեկտիւ վերաբերմունք հապարակ հանէր, այն ժամանակ հենց այստեղ է, որ բոլշեկներին պիտի ամենից քիչ հարւածէր, քանի որ իսկահաբեւբ ամենին չէ հակասել Լենինի տաճիկներին, այլ ընդհակառակը, նա եղել արդարացրել է նրան յայտարարութիւնները:

Այն ինչ՝ եթէ Վրացեանի ենթադրութիւնները շարունակելու լինէինք, այն ժամանակ այժօրա ծաղկող Հայաստանի փոխարէն պիտի ունենայինք միանգամայն աւերակ ու անմարդաբնակ հայրենիք: Այսինքն՝ Ռուսահայաստանը ես չոյն տրագիկական պիտի ապրէր ու նոյն աւերումներին ենթարկէր, որին իրօք ենթարկւել է Տաճկահայաստանը:

Այսօր երկու Հայաստանում էլ մեռելութիւն պիտի տիւնէր և ոչ թէ կիսնք ու զարգացում, այն՝ ինչ որ գոյութիւն ունի Խորհրդային Հայաստանում:

Ս. Վրացեանի կարծիքով բոլշեկեան Ռուսաստանը այն ժամանակ լաւ և ընդունելի կլինէր, եթէ Տաճկաստանի ըվա

ամիններն ուշադրութիւն չդարձնէր, մանաւանդ, նրա հայակեր
ներկայացուցիչների հետ բանակցութեան մէջ չմտնէր:

Հայրիկը վատ է Սուրիկի համար, որովհետեւ նա փա-
ղաքում է նաև Գուրգենին, որը ծեծել է Սուրիկին. այս է Վը-
րացիանների լոգիկան:

Ս. Վրացիանը, որ այնքան ծանօթ է ձեռքնում իրեն
բոլշեիկիան «տեսական աշխարհայացքի ու պատմափիլիսոփա-
յութեան» հետ, չէ կարողանում մի վայրկեան իրեն հաշիւ տալ,
որ այդ աշխարհայացքը ոչ միայն համաշխարհային յեղափո-
խութիւնը նկատի ունի, այլ և նա իր առաջ մի շատ էօնկրեւտ
վճռելի հարց. դա նրա Արեւելքում ու մահմեդական աշ-
խարհում վարելիք քաղաքականութիւնն ու դիրքն է, որ կոմ-
ունիստական Ռուսաստանը կարմիր թելի նման այսօր էլ ան-
շեղ առաջ է տանում:

Ահա այս վերջին հանդամանքի արդիւնք պիտի համա-
շիւ կարլ Ռադեկի և ընկերների մերձեցումը տաճիկ փաշա-
ների հետ, որից այնքան խստօրէն վիրաւորւում է Ս. Վրացիանը:

Արգեճը այդ մեծեցմանը չպիտի վերադրել փրկած ու
պատերազմների մէջ հիւժւած Տաճկաստանի այսօրւա կենդա-
նութիւնը, ինչպէս և նրա երկրի Եւրոպական քաղաքակիրթ
պետութիւնների ուղղին բռնելը. կամ թէ Սովետների հմայքն
ու արտաքին քաղաքականութեան մէջ ձեռք բերած ներկայիս
դիրքը հետեանք չէ՞ իր Արեւելեան քաղաքականութեան:

Հմուտ քաղաքագետը նա է, որ կարողանում է քաղա-
քական բարդ կնճիռներից ու ծանր դրութիւններից պատուով
ու քիչ կորուստներով դուրս գալ, իսկ յաջողութեան դէպքում
էլ աւելի պատիւ նրան:

Եթէ մի բոլէ համեմատելու լինենք բոլշեիկեան Ռուսաստանի
սկզբնական տարիները Հայաստանի կրիտիքական տարիների
հետ, կտեսնենք, որ դրանք անհամեմատելի դրութիւններ են.

որովհետեւ այն, ինչ ապրեցին բոլշեիկները, նրա մէկ հարիւր
երրորդը չապրեց Դաշնակցական Հայաստանը:

Ամեն կողմից շրջապատւած, արտաքին խոշոր ուժերի
կողմից կազմակերպւած հարւածների ենթակա, բացարձակա-
պէս աւերւած, սովի ու համաճարակի բաժին դարձած երկրի
գլուխ անցած. մի երկրի, որի ժողովրդի հսկա մեծամասնու-
թիւնը անհարազատ ու թշնամի տարրերից էին բաղկացած.
մի կողմից հարազատ ներհակ ու ահակութիւն տարրերը՝ Դենի-
կին, Կոլչակ, Իւզոմիչ և այլն, իսկ միւս կողմից՝ Անգլիա,
Ֆրանսիա, Էնտաստան, Ռումինիա և այլ բաղմամբիւ մանր
ազգութիւններ, որոնք առանձին անկախութիւններ էին կազ-
մել և բոլշեիկների դէմ ռազմականութեամբ լեցել. որովհետեւ
ներշնչել էին նրանց, որ «Բոլշեիկներն ոչ այլ ինչ է, եթէ ոչ
վերածննդ ցարիզմի բարբարոս բռնութիւն, որի նպատակն է նոր
լոգոնգների պատրաստել տակ՝ վերականգնել ցարական Ռուսաս-
տանը և այդ ձեւով վերջ տալ ազգային փոքր պետութիւննե-
րին»...

Այդպիսի կախարդական դրութիւնից դուրս գալու համար
ոչ միայն անհրաժեշտ էին կենդանի ու աշխատունոր մտաւան-
ների հարազատ սկզբունքներ ու լոգոնգներ, այլև պէտք էին
փորձաւոր, կարող ու անձնազօշ ղեկավարներ. որպէսզի ժողո-
վուրդն ու երկիրը արեան ու կրակների միջով յաղթական
դուրս բերէին: Բոլշեիկներն երկուսն էլ ունէին և դրան, միմի-
այն դրան պիտի վերադառնա, բոլշեիկեան Ռուսաստանի այսօր-
ւա վերբնական ուժն ու արագ վերականգնումը:

Ս. Վրացիանն ամենից առաջ սրա վրա է ուշադրու-
թիւն դարձնելու և ոչ թէ պառաւ տատիկի նման ինչ որ հե-
քեթներ յետեւից ընկնելու, որը միաժամանակ ուսանելի կը-
լինէր և հայ մտաւանների համար և մանաւանդ իր համար:

Այս ամենի փոխարէն Ս. Վրացիանը փոխանակ ափ-ի

շին աշխատողներին, փոխանակ յեղափոխականի հրճանք հրապարակ հանելու, նա դեռևս թոյլ է տալիս ինչ որ մեղադրանքների մասին մտածելու:

Ամօթ:

Մի բոլոր Ս. Վրացեանը և նմանները խորանքում են արգիծք իրենց ներսը. միայնութեան բողոքներին հաշի են նստում իրենց խղճի հետ, թէ ինչ յանցանք են գործում հայ աշխատաւորի ու հայ հայրենիքի առաջ՝ իրենց վարած բոլոր քաղաքականութեան և դէպի բոլշևիկները բռնած անարդար վերաբերմունքի համար: Մի փոքրիկ հողամաս, որպիսին է Հայաստանը և մի բուն ժողովուրդ, որպիսին է հայ ժողովուրդը՝ չկարողացան նրա ծանր բողոքներին վերկել, չնայած որ բարենպաստ պայմաններ և ոյժեր կային, որոնցից կարելի էր օգտուել:

Բոլշևիկեան ուժերի Կովկաս գտնւելը, բարեբախտութիւն էր, այլապէս նրանց բացակայութեան դէպքում սոսկալի կըլինէր նաև ռուսահայութեան վիճակը:

Ս. Վրացեանին և իր ընկերներին յայտնի էր այն դաշինքն ու մօտիկութիւնը, որ գոյութիւն ունէր մի կողմից թիւրքիայի, իսկ միւս կողմից՝ Վրաստանի և Ադրբէջանի միջև նոյն իսկ Դաշնակցական Հայաստանի ծառայումն ու բաժանումը նախատեսւած էր այս երեք պետութիւնների մէջ:

Ս. Վրացեանը փոխանակ հակառակը պնդելու, փոխանակ ասելու թէ, Սովետների ներկայացուցիչների ներկայութիւնը Երևան և Ալեքսանդրապոլ մի կողմից, իսկ միւս կողմից կարմիր զօրաբանակի Կովկաս գտնւելը՝ միակ զսպիչ ազդակն էր, որ թոյլ չտուէր թիւրքերին իրականացնել իրենց վաղուց փայփայած բարբարոս ծրագիրը. «Հայկական հարցից ազատելու միակ լաւագոյն միջոցը՝ հայերից ազատելն է», որի իրագործումը տեսանք տաճկահայերի մասսայական կոտորածներով:

Ինչպէս կարճամիտ Վրացեանները չեն ենթադրում, որ նոյնը կարող էր պատահել նաև ռուսահայութեան հետ: Եւ փոխանակ Վրացեանը երկմտելու, թէ կարող էր պատահել, որ «Ռուս զօրքի մուտքը Հայաստան առիթ դառնար Քեաղիմ Կարաբէքիրի ձեռքին իր բանակն առաջ շարժելու» և ասելու թէ՝ «մինչև ռուսների Աղստաֆայից և Ղազախից շարժւելն» Երևանի մէջ քարը քարի վրա չէր մնա». ճիշտ հակառակը պիտի էնթադրէր, եթէ ռուսները Կովկաս չլինէին Հայաստանում իրոք քարի վրա չպիտի մնար...

Ս. Վրացեանը, ինչպէս ասել ենք, առաջին շրջանում իրաւունք ունէր չըմբռնելու բոլշևիկների վարած քաղաքական դիմը, այդ ժամանակ ամեն ինչ մոլոր էր ու քառային, մանաւանդ որ, բոլշևիկների դէմ ծառացել էին ոչ միայն Ռուսաստանի ռէակտիւ տարրերը, այլ և նրանց հետ միասին դեմոկրատները, յանձինս էսերների, էդգեկների և մանր ժողովուրդների յեղափոխական կոչւած տարրերի: Ինչպէս և բոլշևիկների դէմ աշխու գուրս էին ելել եւրոպական բուրժուապետութիւնները, որոնց համար բոլշևիկեան յաջողութիւններն ու պրոպագանդը մահաբեր մի ոյժ էր...

Ապա ինչ անուն տու Վրացեանի այսօրուս ներհակ ընթացքին. բթութեամբ բացատրելը քիչ է, որովհետև Վրացեանը ապրելով Պարիզ և ժընև, նա օր օրին յստակօրէն տեսնում է, թէ ինչպէս Սովետներն ամրապնդւում և պատկառելի են դառնում Եւրոպական իմպերիալիստների աչքին: Թէ ինչպէս միջազգային ծանրակշիւ խնդիրները, օրինակ խաղաղութեան և սրա հետ կապած զինաթափութեան հարցը, առանց Սովետների անկարելի է բաւարար և վերջնական վճիռ տալ: Կամ միթէ այնքան կոյր են Վրացեանները, որ չեն տեսնում իրենց թիւ տակ եւրոպայի դեմոկրատիայի ակնյայտնի թեքումը դէպի կոմունիզմն ու կոմունիստական Ռուսաստանը. և թէ

այդ չի նկատուում Ամերիկա, յամենայն դէպս Ֆրանսիան, Գերմանիան և մասամբ էլ Անգլիան, կարելի է այդ տեսակէտի դժայուն աստիճանաչափ համարել:

Ս. Վրացեանները ժամանակին չկարողացան ապահով հայրենիք ստեղծել, հայաճառաման զաղափարն իրականացել արիւնից ու համաճարակներից հայ ժողովուրդն ազատել խաղաղութեան մէջ երկրի աւերած անտնեսութիւնը վերակազմել այլև աղբային կուլտուրան ու հանճարը զարգացնել, այս ամենը չկարողացան. այսօր իրենց անկարողութիւնը կարծէք ուզուեն ուրիշների վրէժը փաթաթել. «Բոլշիւիկների համար հայկական հարց և Հայաստան գոյութիւն չէ ունեցել, գրում է Ս. Վրացեանը, կամ գոյութիւն է ունեցել այն չափով, որ չափով հարկաւոր է եղել իրենց հաշիւների համար... Բրեստ Լիտովսկից սկսած մինչև Մոսկւա հայերը զոհ են բերւած էնվերներին ու Մոստաֆա Բեամալներին: Եւ սակայն, այսպէս լինելով հանդերձ՝ հայ ժողովուրդն իր այլազան հոսանքներով և մասնաւորապէս, Դաշնակցութիւնն անհաշիւ փորձեր են արել Մոսկւայի հետ ընդհանուր լեզու գտնելու և երկու կողմի համար ընդունելի գոյավիճակ հաստատելու նպատակով: Մէկից աւելի պատշիւրեցութիւններ են գնացել Մոսկւա և ուրիշ քաղաքներ, բաղձաթիւ բանակցութիւններ են տեղի ունեցել և թէ արդիւնքը եղել է բացասական այդ բանում ամենից քիչ Դաշնակցութիւնն է մեղաւոր»... *)

Բայց որքան անկեղծ են եղել այդ բանակցութիւնները, որքան մտածւած են եղել Դաշնակցութեան այսօրւա ղեկավարարների կողմից իրենց վերաբերմունքն առհասարակ դէպի բոլշևիզմը:

Սրանք ծանրակշիւ հարցեր են, որոնց մասին Վրացեանը կարծէք հաշիւ չի տալիս իրեն: Մինչդեռ մի քաղաքական կուսակցութեան համար կարևորն այն չէ, թէ իր առաջարկները կըն-

դունեն բոլշևիկների կողմից՝ թէ ոչ. այլ այն, թէ առժե արդեօք բոլշևիկների հետ համագործակցութիւն ստեղծել՝ քի ոչ:

Այս խոշոր սկզբունքային հարցը միշտ էլ բաց է թողնում իր գրութիւնների մէջ Վրացեանը և դա կարծէք դիտմամբ, որպէսզի միշտ էլ առիթը եկած դէպքում ասի՝ թէ Դաշնակցութիւնը համագործակցութեան էր ձգտում. այն ինչ բոլշևիկները մերժեցին. ինչպէս վարւում է Վրացեանը ներկա դէպքում:

Այն ինչ, եթէ լուրջ քննութեան առնենք Վրացեանների գործնական քայլերն ու վարած վարքագիծը հանդէպ բոլշևիկների, պիտի տեսնք, որ նրանք երբէք անկեղծ չեն եղած, որովհետեւ, եթէ անկեղծ լինէին, նրանք զէք այսօր այդ որակման չէին արժանացնի բոլշևիզմն ու բոլշևիկներին, ինչին արժանացնում են իրենց գրութիւնների մէջ:

Բաղձաթիւ փաստերից միայն մէկ վերցնենք.

Երկրորդ ինտերնացիոնալի համագումարին, որ տեղի ունեցաւ Մարսիլում, մասնակցում էր նաև Հ. Յ. Դաշնակցութիւնը: Փոքրիկ հաշեւաութեան մէջ, որ տպագրւած է «Դրօշակի» № 3 թղ համարում, կարդում ենք. «Համագումարի յանձնաժողովում Դաշնակցութեան պատգամաւորները մասնակցում էին ընդհանուր հարցերի քննութեանը, և մի քանի տեղ ներանց միջամտութեան հետևանքով բանաձևերը փոփոխութեան ենթարկեցին: Առանձնապէս կենդանի մասնակցութիւնը ցոյց տւին նրանք Արևելեան գործերին վերաբերեալ յանձնաժողովում, ուր աշխատում էին ցրել արևմտեան ընկերների մէջ տարածւած այն թիւր կարծիքը, թէ բոլշևիկները յեղափոխականացող գեր են կատարում Արևելեան ժողովուրդների կեանքում»...

Առ ամենից թարմն է:

Ուրեմն, ըստ Դաշնակցութեան կոյր առաջնորդների,

*) Տես «Դրօշակ» № 3.

բողիկեանքի գերը Արևելքում «յեղափոխականացնող» չէ. Գերմանիայի և Անգլիայի ընկերներն այդ բանի մէջ համոզւած են, իսկ Դաշնակցութեան ու Վրաստանի էղզիկները կարծիքով դա թիւրիմացութիւն է:

Մենք մեր ձեռքին տակ չունինք համագումարի ստեղծութեան անհրաժեշտութիւնը, այլապէս այլ մարգարիտներ կը գտնենք բողիկեանքի հասցէին. բայց սա էլ բաւական է:

Եթէ բողիկեանքը յեղափոխականներ չեն, եթէ նրա՞ք Արգիւլ Համիդից ու ցարից էլ աւելի բռնակալներ են, ապա ուրեմն էլ ինչ «համագործակցութեան» մասին է, որ Վրացեանը շարունակ շեշտում է:

Առաջին անգամն է, որ յիշում եմ, թէ Հ. Յ. Դաշնակցութիւնը իր 25 տարւած ընթացքում, երբ ևիցէ փորձած լինի համագործակցութեան մասին մտածել որեւէ բռնապետի կամ բռնապետութեան հետ:

Եթէ բողիկեանքը բռնապետութիւն է, իսկ բողիկեանքը բռնապետներ, ապա էլ ինչո՞ւ համար է Ս. Վրացեանը երկար ու ձիգ զբոսնալ փորձերի մասին, թէ Դաշնակցութիւնը ցանկացել է լեզու գտնել բողիկեանքի հետ: Բռնապետների հետ կապելի է լեզու գտնել, հարցնում ենք, յեղափոխական Վրացեան:

Իսկ եթէ բողիկեանքը Դաշնակցութեան հետ համագործակցութեան լեզու գտնէին, այն ժամանակ բռնակալ ու արգահատիկ չէին լինի, հա:

Անհնթեթութիւնը պարզ է:

Անճարակը դիմացնի մէջ միշտ էլ պակասութիւններ է տեսնում, և այսօր Դաշնակցութեան անճարակ ղեկավարները Սովետական կարգերի, ինչպէս և բողիկեանքի մէջ, պակասութիւններից դուրս լաւ բան չեն տեսնում:

Ս. Վրացեանը բազմիցս անգամ կրկնում է ու պնդում,

թէ «բողիկեանքը համար հայկական հարց ու Հայաստանի դուրսը չէ ունեցել», սակայն և այնպէս ժամանակն ու փաստերը ցոյց տւին, որ բողիկեանքն են ստալինը, որ իրական Հայաստան ստեղծեցին և այդպիսով հնարաւորութիւն տւին հայ հատուածի ինքնօրէն ու ազատ զարգացման:

Զարմանալի յամառ ու արևոտական հակառակութիւն են երեան հանում դաշնակցական ղեկավարները գէպի բողիկեանքի ամեն մի լաւ ձեռնարկութիւն: Եւ ընդհակառակը, ստեղծարարութիւն ու անտարբերութիւն են ցոյց տալիս Դաշնակցի պետութիւնների հայ դատի և հայ իրաւունքների ոտնահարման դէպքում:

Ի՞նչով բացատրել այս տարբերակութիւնը, ինչո՞ւ դաշնակցական շէֆերը հանգստութիւն են պահում Անգլիայի և Ֆրանսիայի հանդէպ, երբ սրանք հայ ժողովրդի պատմական անկապտելի իրաւունքները զոհաբերեցին Տաճկաստանին, և երբ հայ ժողովրդի գետերով հոսեցրած արիւնը իրենց շահելին միայն ծառայեցրին: Եւ չնայած սրան, այնուամենայնիւ Դաշնակցութեան կառնտան ղեկավարները ձեռք չեն քաշում այդ իմպերնալիստներից, այսօր էլ նրանց զոհերն են մաշում և նորից ինչոր սպասելիքներ են կապում նրանց հետ:

Երեկ էր դեռ, որ այդ նոյն պետութիւնները հինգ միլիոն տաճկական լիրան, որ գրաւած էր Կ. Պոլիս հայ վաճառատներից ու բանկերից և պահում էր Բերլինի պետական բանկում, որպէս աւաթ բաժանեցին իրար մէջ, չնայած որ պետական այնպիսի խոշոր մարդիկ, ինչպիսիք են, Բալլաին Բալֆուր, Պուանկուրէ, Դաշնակցութեան շէֆերի ներկայացուցիչին խոստացել էին այդ գումարը հայ սովետական ղաղթականութեան կարիքներին ու նրանց Հայաստան փոխադրութեան յատկացնել:

Ի՞նչ մօզական կապ է դա, որ Հ. Յ. Դաշնակցութեան ղե-

կազմարներին տնխգելի է պահում իմպերեալիստներէց, որոնք ամեն կերպ արգելք հանդիսացան հայ ու տաճիկ ներկայացուցչութեան հանդիպելու իրար և իրար մէջ վերջացնելու ներքին ու սահմանային խնդիրները: Մի բան, որ Հայաստանի յետագա բոլոր զժրախտութիւններէ հիմնական զրդապատճառը դարձաւ:

Այն ժամանակ, երբ Տաճկաստանը թոյլ ու Դաշնակից պետութիւնների ձեռքին խաղալիք՝ իր հղբայրական ձեռքն էր մեկնում Հանրապետական Հայաստանի վարիչներին ու Դաշնակցութեան և ցանկանում էր, որպէսզի հայկական հարցը լուծեն ներքին համաձայնութեամբ, Դաշնակիցների հովանաւորութիւնից գլխովցած՝ Դաշնակցութեան ղեկավարները կոշա ու կոպիտ յետ էին մղում այդ ձեռքը, որորհետեւ Հայաստանի փոքր ծրագրերն անգամ քիչ էր նկատւում. — Վանի, Մշո, Էրզրումի, Տրապիզոնի վիլայէթները, Տրապիզոն նաւահանգստով, անբաւարար էր նկատւում:

Դաշնակիցները, դրանց հետ նաեւ Վիլսոնը, պահանջում էին Կիլիկիայի հարուստ շրջանը ևս գերբնականօրէն կցւի Հայաստանին, այլապէս ամերիկական կապիտալիստները չեն համաձայնել իրենց դրամը ներմուծել Հայաստան...

Եւ գլխովցած այդ առաջարկներից, հայ քաղաքական գործիչները չէին բաւականանում Թիւրքիայի կողմից արւած «համեա» ինքնակամ զիջումներով. — Վանի շրջանը, Ալաշկերտի ու Բասենի հովիտները, մէջն առած նաեւ Մանազկերտն ու Խնուսի շրջանը, ապա ևլք Սև ծովը, Ճորոխի հովտով, Ռիզա նաւահանգստով, այս բոլորը մենք քիչ համարեցինք, որովհետեւ Դաշնակիցների կիկը թոյլ չէր տալիս այդ բոլոր բաւականալ, քանի որ «հաւսանգաւ» Թիւրքիայից կարելի էր աւելին պոկել:

Այդ նոյն առաջարկը բերաւ նաեւ Ալ. Խատիսեանը իր Եւրոպայից վերադարձին: Թիւրքիո կողմից Կ. Պոլսում յատուկ

տեսակցութիւն է ունենում Փալիաթ Բէյը Ալ. Խատիսեանի հետ և վերը յիշած առաջարկն է անում ու խնդրում, որ «հայ և թիւրք ընտանեական գործերի մէջ խուսափենք օտարների խառնելուց և աշխատենք ինքներս վերջ տալ մեր ներքին տարաձայնութիւններին. լաւ չէ մեզ համար, աւելացրել է Փալիաթ Բէյը, որ օտարի միջոցով ենք ուզում մեր վէճերին վերջ տալ»...

Ալ. Խատիսեանը ժամանակին բերաւ և ղեկուցեց Հանրապետական Հայաստանի կառավարութեան ու Դաշնակցութեան Բիւրօյին, սակայն այդ խնդրը առանց լայն խաւերի քննութեան, նոյնիսկ առանց դաշնակցական պարլամենտական Փրակցիայի գիտութեան, այնպէս էլ քնեց: Քնեց, որովհետեւ արդէն Մեծ Հայաստանի ծրագրերը գծել էր Դաշնակիցների զինւորական յանձնաժողովը, որը յետագայում, Ահարոնեանի ձեռքին, էլ աւելի ընդարձակեց և դարձաւ Սևրի Հարաբաստիկ Դաշնագիրը...

Այսպիսով՝ Հայաստանի ճակատագրական սխալների պատճառը Դաշնակից իմպերեալիստներն են կոած, նրանք են նաեւ Հ. Յ. Դաշնակցութեան առաջին հարւածողները, նրանք են և՛ զիլ խոշոր չափով Դաշնակցութեան շեղողը Ֆեդերացիայի ծրագրից, նրանք են նպաստել Հ. Յ. Դաշնակցութեան Միացեալ և Անկախ Հայաստանի ռէակտիւ տեսակէտին կանգնելու, և այսօր էլ նոյն իմպերեալիստներն ուժ են տալիս Դաշնակցութեան կոյր ղեկավարներին նոյնը պաշտպանելու. երբ արդէն Թիւրքահայաստանը վաղուց զոհարերել են իրենց շահերին:

Մինչդեռ Լեւինը և կոմմունիստները խոստացան հայ ժողովրդին, ինչպէս և բոլոր փոքր ժողովուրդներին, ազատութիւն ու ինքնօրէնութիւն տալ՝ և տւեցին: —

Աւելին դեռ. ժողովրդների ֆեդերացեան նրանք վերածեցին աղգերի կոմֆեդերացիայի. այսինքն՝ ամեն մի աղգ առանձին վերցրած հաւասարազօր անգամ դարձաւ Սովետական

Մեծ Դաշնակցութեան: Եւ այսօր Հայաստանը Սովետական մեծ ընտանիքի հաւասարազօր անդամն է:

Այս ամենը տեսնում են Դաշնակցութեան կոյր ղեկավարները, տեսնում են այսօրւա Հայաստանի խաղաղութիւնն ու հանգստի մէջ ցոյց տւած նրա յառաջադիմութիւնը, տեսնում են բուլղէիկների խօսքի ու գործի այսօրւա ներդաշնակցութիւնը և զարձեալ շարունակում են զաղութահայ անդիտակ տարերերին ու աշխատաւորութեան հեռու պահել Մայր Հայրենիքից:

Մենք չենք հասկանում Ս. Վրացեանների խելագար գործնականութիւնը, կասենք միայն, որ նրանց հակահայրենիք ու հակաժողովրդական ընթացքը դէմ է նոյնիսկ Հ. Յ. Դաշնակցութեան վաղեմի տրագիցեաններին, և այն արհեստական հեռաւորութիւնը, որ նրանք պահում են զաղութահայ մասսաների և Հայաստանի միջև, տւական հանգամանք չէ կարող ունենալ, քանի որ ամեն կողմից և ամեն տեղ թորհրդային Հայաստանի հմայքը օր օրին մեծանում է և մասսաները գալիս են այն համոզման, որ հայ ժողովրդի և հայ հայրենիքի միակ բարեկամն ու լաւը ցանկացողը Սովետական Ռուսաստանն ու Սովետական կարգերն են:

Դրաստիկ

Համբի Ա. Գառգիւն.

Ա.Գ.Ա.Լ.Լ. Ա.Ս.Ա.Ն.Ն.

«Ազգային գրադարան»



NL0415906

50
ՆՈՅՆ ՀԵՂԻՆԱԿԻ ՀՐԱՏԱՐԱԿՍԵ ԱՌԱՆՁԻՆ ԳՐԱԳՈՅՈՒՆՆԵՐԸ

1.— Ազատութեան ուղին և հայի քաղաքական վարքագիծը 2 Ղուան:

2.— Մոմենտը պահանջում է. 1 Ղու. 50 ս.

ԳԻՆՆ Է՛ 2 ՂՌԱՆ.

